Ազգ
Azg
7 ՅՈՒՆԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 103(4722)
ISSN: 1829-1651
9 771829 165003 11103

# Հայաստանի եւ Վրաստանի հոգեւոր առաջնորդները կայցելեն Ջավախք

Յունիսի 10-ին պաշտոնական այցով Վրաստան կմեկնի Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն: «**Ազգ**» օրաթերթի հետ զրույցում Մայր աթոռ Սուրբ էջմիածնի մամլո դիվանի պետ **Վահրամ քահանա Մելիքյանն** ասաց, որ օրակարգը բավական հագեցած է:

Նում գտնվող հայկական եկեղեցիների վերադարձման հարցում: Այդ ժամանակ Վեհափառը նշել էր, որ Վիրահայոց թեմից պահանջ է ներկայացվել Վրաստանի իշխանություններին՝ հետ ստանալու Վրաստանում գտնվող 6 հայկական եկեղեցիներ, որպեսզի դրանք դառնան գոր-





Յունիսի 11-ին կաթողիկոսը կհանդիպի Վրաց պատրիարք Իլյա Բ-ին, այնուհետեւ՝ նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն: Օրվա երկրորդ կեսին կաթողիկոսը կայցելի Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոն:

Յունիսի 12-ին Գարեգին Բ-ն կվերաօծի Հավլաբարի եկեղեցին եւ կմասուցի պատարագ:

«Յունիսի 13-ին Վրաց պատրիարք Իլյա Բ-ի ուղեկցությամբ Ամենայն հայոց կաթողիկոսը կմեկնի Ջավախք: Հաջորդ երեք օրերի ընթացքում կաթողիկոսը կլինի Ախալցխայում, Ախալքալաքում, Նինոծմինդայի եւ Ծալկայի շրջաններում», ասաց տեր Վահրամը:

Դեռեւս մարտ ամսին «**Ազգ**» օրաթերթի հետ ունեցած զրույցի ժամանակ **Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը,** անդրադառնալով Վրաստանում հայկական եկեղեցիների կարգավիճակի խնդրին, հույս էր հայտնել, որ ջանքերը կպսակվեն հաջողությամբ ոչ միայն Վիրահայոց թեմի գրանցման, այլեւ Վրաստա-

ծող եւ ծառայեն թեմին: Այժմ թեմը սպասում է պատասխանին:

«Վրաստան կատարվելիք այցի հանդիպումների ժամանակ կբարձրացնենք նաեւ Վիրահայոց թեմին հուզող բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ եկեղեցիների վերադարձման», ասել էր կաթողիկոսը:

«Հայկական եկեղեցիների հարցը երկու երկրների հոգեւոր առաջնորդների հանդիպման ժամանակ քննարկվելո՞ւ է» հարցին տեր Վահրամը պատասխանեց. «Կքննարկվեն բոլոր այն հարցերը, որոնք տարիներ շարունակ մտահոգության տեղիք են տվել»:

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի այցը Վրաստան նախատեսվում էր դեռեւս անցյալ տարվա հունիս ամսին, հետաձգվեց նոյեմբերին եւ կրկին չեղյալ հայտարարվեց:

Հիշեցնենք, որ 1894-ից ի վեր, երբ Խրիմյան Հայրիկը այցելեց Ջավախք, հայոց որեւէ կաթողիկոս պաշտոնական այցով Ջավախքում չի եղել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ո՞վ ո՞ւմ հետ է տունտունիկ խաղում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Երեխաները մինչեւ ընտանիք կազմելը տունտունիկ են խաղում», ասել է երեկ ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանը**՝ նկատի ունենալով ՀԱԿ-ին, երկխոսություն վարելու պատվիրակության ստեղծմանը եւ արտահերթ ընտրությունների շուրջը բանակցելու ՀԱԿ-ի երազանքին: Հարցը ծագում է ինքնին՝ ո՞ւմ հետ են ընտանիք կազմելու, արդյոք իշխանությա՞ն, կամ ո՞վ է իշխանությունը՝ միայն ՀՀԿ-ն, թե՞ ողջ կոալիցիան. այս մի հատիկ միտքը տարընթերցումների բավական առիթ կարող է տալ: Ընդհանրապես ասենք, որ Գալուստ Սահակյանին կարելի է ՀՀԿ-ում ամենատեղեկացվածներից մեկը համարել, բայց նրա ասուլիսից, ՀՀԿ-ական այլ բանախոսների վերջին երկու-երեք օրվա ելույթներից, ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովի երեկ տարածած հայտարարությունից այնքան էլ չի երեւում, որ նրանք իրենց անելիքը հստակ գիտեն, եւ կամ գիտեն՝ ի՞նչ է հետեւելու ՀԱԿ-ի երկխոսող պատվիրակության կազմի հայտարարումից հետո: Բայց մի քանի բան հստակ բոլորն են ասում՝ ՀԱԿ-ի հետ



երկխոսելու պատասխան պատվիրակության անհրաժեշտություն ոչ մի ՀՀԿ-ական չի տեսնում, եւ ՀԱԿ-ի՝ մյուս ուժերի համեմատ մնացող դիրք ընդունելն անընդունելի է, եւ երրորդ՝ ՀԱԿ-ի առաջարկած երկխոսության նյութը՝ արտահերթ ընտրությունը չլինող բան է, դրա համար գործոն չկա: Էլ չասած՝ որ Գ. Սահակյանն էլ ՀԱԿ-ի դաշտում ոչ մեկին չի տեսնում, որի հետ ինքը կնստեր ու կբանակցեր:

Վերհիշելով Տեր-Պետրոսյանի վերջին ելույթը՝ կրկին փիքսենք, որ փաստորեն Տեր-Պետրոսյանին ամեն ինչից շատ անհանգստացնում էր Քոչարյանի ուրվականը, որին ուղղեց իր բանախոսական նետերի մի զգալի մասը՝ առանց անուն տալու: Նրա մտահոգությունն այն էր, որ հանկարծ ու չհայտնվի Քոչարյանը՝ պոչից գցած մի քանի ուժ, ու ՀԱԿ-ի բաժին ստանալիքը պակասի ապագա ընտրությունների տորթից, քանի որ եթե Քոչարյանը հայտ ներկայացնի մասնակցելու ընտրություններին, նրան գոնե առերես չեն կարող ասել «չէ»: Տես էջ 2

# ՀԱՊԿ պաշտպանության նախարարների խորհրդի նիստ

**Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Մինսկ՝ մասնակցելու հունիսի 7-ին կայանալիք Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստին: Այդ մասին տեղեկացնում են պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից:**

Հ. Ա.

# Մամեդյարովի «6-12 ամիսը»

**Յունիսի 11-ին Մոսկվայում կհանդիպեն Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները: «Ամերիկայի ձայնին» տված հարցազրույցում այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Ադրբեջանի «գլխավոր դիվանագետը» նշել է, որ տարածաշրջան ժամանած Մինսկի խմբի համանախագահները, որոնք երեկ ժամանել են Բաքու, հակամարտության կողմերին կներկայացնեն խնդրի հանգուցալուծման առաջարկները: «Կողմերի արձագանքը ստանալուն պես համանախագահները կուղարկեն դրանք Կազան՝ նախագահներին: Եթե պետության նախագահները հավանության արժանացնեն այդ առաջարկությունները, դա կլինի եւս մեկ քայլ առաջ: Կմնան մի շարք հարցեր, որոնց վրա հնարավոր կլինի աշխատել», ասել է Մամեդյարովը: Ադրբեջանի արտգործնախարարն ընդգծել է, որ հիմնարար սկզբունքներում համաձայնության հասնելուց հետո սկսվելու է խաղաղության համաձայնագրի մշակումը. «Բացառվում է, որ սկզբունքները համաձայնեցնելուց հետո 70 տարի աշխատենք խաղաղության համաձայնագրի վրա: Եթե սկզբունքներն ընդունվեն, ապա 6-12 ամսվա ընթացքում պետք է ավարտվի նաեւ աշխատանքը համաձայնագրի շուրջը», բավական լավատեսորեն ընդգծել է Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը:**

**Ինչպես տեղեկանում ենք Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքէջից, երեկ Իլհամ Ալիեւն ընդունել է Մինսկի խմբի համանախագահող եռյակին՝ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ռոբերտ Բրադկեին (ԱՄՆ) եւ Բեռնար Ֆասիեին (Ֆրանսիա): «Հանդիպմանը տեղի է ունեցել կարծիքների փոխանակում ԼՂ հիմնահարցի կարգավորման վերաբերյալ», տեղեկացնում է Ադրբեջանի նախագահի կայքէջը:**

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղարի տեղեկացմամբ, Երեւանում կլինեն հունիսի 9-ին եւ կհանդիպեն նախագահ Սերժ Սարգսյանի ու արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Նախատեսվում է նաեւ համանախագահների այցը Ստեփանակերտ:**

Հ. Ա.

# Փլուզում Երեւան-Քաջարան-Մեղրի ճանապարհին

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, հորդառատ անձրեւների հետեւանքով հունիսի 5-ին, ժամը 15.30-ի սահմաններում խոշոր փլուզում է տեղի ունեցել Երեւան-Քաջարան-Մեղրի միջպետական ավտոճանապարհի 365-րդ կիլոմետրում: Ճանապարհաշինարարները նույն օրը երկնյան ժամանակավոր ճանապարհ են բացել Մեղրի գետի ափի երկայնքով: Վարորդներին խորհուրդ է տրվում երթեւեկել այլընտրանքային շրջանցիկ՝ Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի ճանապարհով:**

**Հաղորդագրության մեջ նշվում է, որ փլուզման պատճառած վնասի չափերը ճշտելու նպատակով տրանսպորտի եւ կապի նախարարությունը կազմել է համապատասխան հանձնաժողով, որը տեղում ուսումնասիրություններ է կատարում:**

Ա. Մ.

# Սոյայի ընձյուղները՝ աղիքային վարակի պատճառ

Մայիսի սկզբից մինչեւ օրս Գերմանիայում 21 եւ Շվեդիայում 1 (Գերմանիա այցելած) անձանց մահվան հավանական պատճառը աճեցվող սոյայի ընձյուղներն են: Ստորին Սաքսոնիայի գյուղատնտեսության նախարար Գերտ Հանենը բնակչությանը խորհուրդ է տվել սոյա չուտել: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Հանեի խոսքերով, առայժմ չկան ստուգումների պաշտոնական արդյունքներ, որ աղիքային սուր վարակի պատճառը հենց Ստորին Սաքսոնիայում աճեցված սոյան է: Սակայն փորձագետները կարծում են, որ հենց դա է 22 մարդու մահվան պատճառը դարձել:

Ռոյթեր գործակալության տվյալներով, Գերմանիայում մայիսի սկզբից E-coli աղիքային ցուպիկով վարակվել է 2153 մարդ: Նրանցից 627-ի օրգանիզմում բժիշկները հայտնաբերել են երիկամների եւ կյանքի համար վտանգավոր բարդացումներ:

Սկզբում փորձագետները ենթադրել էին, թե վարակը տարածվում է վարունգից, լոլիկից եւ հազարի (մարոլ) տերեւներից: Թեեւ այդ բանջարաբույսերն «արդարացվեցին», բայց ԵՄ-ում դարձյալ վտանգավոր են համարվում:

# Ահմադինեժադի այցը հետաձգվեց մինչեւ «առավել հարմար ժամկետներ»

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Երեկ Երեւանում սպասում էին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին, որը երկօրյա պաշտոնական այցով պետք է ժամաներ Հայաստան: Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էր «**Ազգը**»՝ Ահմադինեժադը Հայաստան էր գալիս մեր երկրի հետ բոլոր ոլորտներում գործակցությունը զարգացնելու բարձրաձայնած ցանկությամբ: Սակայն, ինչպես երեկ հայտնի դարձավ, Իրանի նախագահի այցելությունը անորոշ ժամանակով հետաձգվել է: Ինչպես տեղեկանում ենք Իրանի ԱԳՆ-ից, «Ստորագրվելիք փաստաթղթերը կարգավորելուն եւ ավարտական տեսքի բերելուն ավելի շատ ժամանակ տրամադրելու պատճառով կողմերի փոխադարձ համաձայնությամբ այցի ժամկետը փոխվել է: Մահմուդ Ահմադինեժադի այցը մոտ ապագայում հաստատապես կկայանա, այցի ժամկետների մասին առաջիկայում կհայտարարվի»: Իրանի ԱԳՆ մամուլի խոսնակ **Ռամին Մեհմանպարաստը** նաեւ հավելել է, որ Իրանն ու Հայաստանը, որպես հարեւան երկրներ, լավ հարաբերություններ ունեն եւ, ելնելով բարիդրացիական հարաբերություններից, երկու երկրների պաշտոնյաների միջեւ մշտապես տեղի են ունենում խորհրդակցություններ: Իր հերթին ՀՀ նախագահի մամուլի քարտուղար **Արմեն Արզումանյանը** նշել է. «Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադի այցը Հայաստան հետաձգվել է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այցը կիրականացվի առավել հարմար ժամկետներում»:

Այժմ եկեք փորձենք հասկանալ՝ ի՞նչ է նշանակում «ավելի հարմար ժամկետներում» հասկացողությունը եւ ինչո՞ւ հունիսի սկիզբը «հարմար ժամկետ չէ», ո՞ւմ համար «ավելի հարմար» ժամկետ չէ: Նախ ակնհայտ է, որ համաձայն Իրանի ԱԳՆ հայտարարության, թե «ստորագրվելիք փաստաթղթերը կարգավորելու կարիք ունեն», վկայում է, որ Ահմադինեժադի այցը Երեւան այս ժամանակահատվածում առաջին հերթին «անհարմար» է ընդունող՝ հայկական կողմին, եթե, իհարկե, իրոք «ստորագրվելիք փաստաթղթերը կարգավորելու կարիք ունեն», ինչպես նշում է իրանական կողմը, եւ ինչը՝ երկրի նախագահի նախօրոք հայտարարված պաշտոնական այցի պարագայում իրատեսական չի թվում: Մյուս կողմից, չէ՞ որ «անհարմար ժամանակահատված է» եւ Իրանի ներքաղաքական կյանքի համար: Մասնավորապես հունիսի 1-ին կայացած իրանական Մեջլիսի նիստի ժամանակ 165 կողմ, 1 դեմ, 13 ձեռնպահ ձայներով դրական եզրակացություն է տրվել մեջլիսի էներգետիկայի հարցերով հանձնաժողովի պատրաստած զեկույցին, որ Իրանի նախագահ Ահմադինեժադի՝ նավթի նախարարի պաշտոնի ստանձնումը հակասում է օրենքին: Մեջլիսը որոշում է կայացրել այդ խախտումներն ուսումնասիրելու համար գործն ուղարկել դատական իշխանություններին: Սրանից հետո Ահմադինեժադը, ինչպես իր հրամանագրով ինքն իրեն նշանակել էր նավթի նախարար, այնպես էլ ազատվեց այդ պաշտոնից: Այդուհանդերձ Իրանում Պահապանների խորհուրդը, որը վերահսկվում է հոգեւոր առաջնորդի կողմից, լուրջ սկզբունքային տարաձայնություններ ունի նախագահ Ահմադինեժադի հետ, ինչն, ինչ խոսք, կարող է անդրադառնալ Ահմադինեժադի՝ արտերկիր մեկնելու օրակարգերի վրա: Սակայն այս տարաձայնությունները նոր չեն, դրանք կային նաեւ այն ժամանակ, երբ նախապատրաստվում էր այցելությունը, հետեւաբար՝ եթե ազդել են այցի հետաձգման վրա, ապա ոչ այնքան էականորեն: Տես էջ 2

# Խմելու ջրից վարակվել է 57 բնակիչ

Հունիսի 3-ի երեկոյան ժամը 20-ից Երեւանի «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց են տեղափոխվել Նուբարաշենի թաղամասի թիվ 11 փողոցի բնակիչներ: Ինչպես նշում էր հիվանդանոցի տնօրեն, հանրապետության գլխավոր ինֆեկցիոնիստ **Արա Ասոյանը**, եղել են նույն գանգատները՝ ընդհանուր թուլություն, ցավեր որովայնի շրջանում, սրտխառնոց, փսխումներ, նաեւ բարձր ջերմություն: Ահազանգից հետո 10-15 ժամվա ընթացքում հիվանդանոցը ընդունել է 26 հիվանդների: Դեռ երեկ երկու հիվանդ եւս ընդունվել են, վարակվածների թիվը հասել է 57-ի, որոնցից 16-ը մեծահասակներ են, 43-ը՝ երեխաներ: Երեկվա դրությամբ արդեն 26-ը դուրս է գրվել, եւ շարունակվում է դուրսգրումը: Ըստ պրն Ասոյանի՝ վարակվածներից որեւէ մեկը վերակենդանացման բաժին չի տեղափոխվել եւ ծանր վիճակում չի եղել: Գլխավոր ինֆեկցիոնիստը հատուկ շեշտեց, որ այս դեպքերը բացարձակ կապ չունեն Եվրոպայում գրանցված վարունգային հիվանդության հետ: Ահազանգից հետո առողջապահության նախարարության համապատասխան կառույցների աշխատակիցներն այցելել են Նուբարաշենի 11 փողոցի բոլոր տները, ստուգել բնակիչներին, ցուցումներ տվել եւ հորդորել խմելու ջուրը օգտագործել միայն եռացնելուց հետո: «Այդ աշխատանքները նպաստել են, որ հիվանդներին վաղ հայտնաբերենք ու կանխենք հետագա բարդությունները անգամ թեթեւ հիվանդների շրջանում, որոնց տնային բուժում ենք նշանակել»:



Ասուլիսին ներկա էր նաեւ «Երեւան ջուր» ՓԲԸ գլխ. տնօրեն **Գոռ Գրիգորյանը**, որը պնդում էր, որ ահազանգերը ստանալուց հետո, տեղում վերցված ջրի նմուշներում որեւէ փոփոխություն չի գրանցվել: Որքան էլ տնօրենը պնդում էր, որ բնակիչները մատակարարվող ջրի վատ որակից չեն վարակվել, ե՛ւ հանրապետության գլխ. ինֆեկցիոնիստ Ասոյանը, ե՛ւ հանրապետության հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության պետ Վանյանը հավաստիացնում էին, որ «հավանական օջախը ջուրն է եղել, եւ մեկ օրից պարզ կդառնա իսկական պատճառը»: Պրն **Վանյանն** ասաց, որ իրավիճակը գնահատելու եւ վարակի օջախը կանխելու համար պարզ է դարձել, որ այն ունի տեղային բնույթ եւ ընդգրկում է միայն Նուբարաշենի 11-րդ փողոցը: «Վարակի հիմնական պատճառը, ըստ մեր համաճարակաբանության վերլուծության, կապվում էր խմելու ջրի հետ: «Երեւան ջրի» հետ համատեղ միջոցառումներ իրականացվեցին եւ ընդհանուր առմամբ, մնացորդային քլորը ջրի մեջ բավարար էր: Սակայն բնակչության կողմից կային բողոքներ: Իհարկե կար փոքր վթար ջրի խողովակներում, որն անմիջապես վերացվեց, որը կարող էր հավանական վարակի պատճառ դառնալ...», պարզաբանեց մասնագետը:

Մինչ լաբորատոր հետազոտությունների վերջնական պատասխանը կլինի, մասնագետները բոլոր վարակվածներին ախտորոշել են «անհայտ ծագման աղիքային հիվանդություն» եւ իրականացրել համապատասխան բուժման կուրս: «**Ազգի**» այն հարցին՝ ո՞վ է կրելու պատասխանատվություն կատարվածի համար եւ ո՞վ է փոխհատուցելու տուժածներին, «Երեւան ջրի» տնօրենը որքան էլ խուսանավում էր ու հերքում, որ ջրից են վարակվել, ի վերջո լրագրողների հարցերի տարափին չդիմանալով՝ մի կերպ ասաց. «Եթե պարզվի, որ մեր մեղքն է, կլինի փոխհատուցում»:

«**Ազգը**» հիշեցրեց պրն տնօրենին, որ երկու տարի առաջ Արաբկիր համայնքում նույնատիպ դեպքի դիմաց որեւէ բնակիչ փոխհատուցում չստացավ, եւ նույնը կլինի այս դեպքում:

«**Ազգը**» նաեւ խնդրեց պրն Ասոյանին պարզաբանել, թե ինչու են ավելացել շնչառական ուղիների եւ գրիպային հիվանդությունները: «Այդ ամենը կապված է ջերմաստիճանի կտրուկ փոփոխության հետ: Անհրաժեշտ է դիմել բժշկի, իսկ ավելի լավ է տնական պայմաններում օգտագործել թթի դոշաբ եւ տաք հագնվել, չխաբվել եղանակի քմահաճությունից»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ահմադինեժադի այցը հետաձգվեց մինչեւ «առավել հարմար ժամկետներ»

*1-ին էջից*

Ուրիշ հարց է հունիսի սկիզբը որպես Իրանի նախագահի Երեւան այցելության ժամկետ ընտրելու որոշումը: Նախ՝ ընդամենը մեկ շաբաթից՝ հունիսի 12-ին կկայանա Նալբանդյան-Լավրով-Մամեդյարով հերթական եռակողմ հանդիպումը, որը նախապատրաստում է հունիսի 25-ին ՌԴ-ի Կազան քաղաքում կայանալիք երեք երկրների նախագահների հանդիպումը: Ինչպես ավելի վաղ՝ ֆրանսիական Դովիլում Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահներ Մեդվեդեւը, Օբաման եւ Սարկոզին կոչ արեցին կողմերի առաջնորդներին՝ վերջապես համաձայնության գալ միջնորդների առաջարկած հակամարտության բացառապես խաղաղ լուծման հիմնարար սկզբունքների շուրջը: Բացի սրանից՝ տարբեր փորձագետներ ու որոշ աղբյուրներ, վկայում են, որ Կազանի գալիք եռակողմը կարող է եւ որոշակի բեկում մտցնել ԼՂ հիմնահարցի կարգավորման գործում: Սա նշանակում է, որ Թեհրանը, որը ԼՂ-ին անմիջական սահմանակից է եւ բազմիցս է հանդես եկել հակամարտ կողմերի միջեւ միջնորդ լինելու պատրաստակամությամբ, կարող է որոշակի զգուշավորություն ցուցաբերել եւ ժամանակ շահել: Չէ՞ որ ԼՂ հակամարտության խաղաղ լուծման հիմնարար սկզբունքների ներկա տարբերակը ենթադրում է տարածաշրջանում Իրանին անմիջական հարեւանությամբ «օտարերկրյա խաղաղապահ ուժերի» ներկայացում, ինչին Թեհրանը երբեք համաձայնություն չի տվել: Հետեւաբար՝ հնարավոր է, որ իրանական կողմը «ստորագրվելիք փաստաթղթերում» որոշ դրույթներ է ցանկացել մտցնել, ինչի վերաբերյալ հայկական կողմը ժամանակ է խնդրել «մտածելու»: Թերեւս այս հանգամանքով էլ կարելի է պայմանավորել Ահմադինեժադի այցի հետաձգման կապակցությամբ երկու կողմերի տարածած պաշտոնական հաղորդագրությունների տեքստերի տարբերությունը. եթե Թեհրանը պնդում է, որ «ստորագրվելիք փաստաթղթերը կարգավորելու կարիք ունեն», ապա հայկական կողմից լսում ենք՝ «հարմար ժամանակ չէ» պատասխանը: Այնպես որ, ինչպես Թեհրանը, այնպես էլ Երեւանը կարող են սպասել նաեւ Կազանի հանդիպման ավարտին՝ մինչ Իրանի նախագահը «գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող փաստաթղթեր ստորագրելու համար» կժամանի Երեւան:

Պակաս կարեւոր չեն, գուցե եւ ավելի կարեւոր են Պարսից ծոցի ավազանում տեղի ունեցող իրադարձությունները: Թեհրանի ակնհայտ սրված հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ, որը նաեւ Արեւմուտքի քաջալերանքով, զորք է մտցնում մեծ մասամբ շիա Բահրեյն եւ Եմեն: Հիշեցնենք նաեւ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի հայտարարությունը, որը նշեց, թե ժամանակն է շրջափակելու Իրանը տարածաշրջանում Իսրայելի դաշնակիցների միջոցով, ինչը եւ, կարելի է ասել, տեղի է ունենում «արաբական հեղափոխությունների» եւ Թեհրանի շուրջն օղակը սեղմելու տեսքով: Այնպես որ ժամանակը կարծես թե իրոք հարմար չէ Ահմադինեժադի այցի համար, ինչպես ներքաղաքական ու տարածաշրջանային լուրջ խնդիրներ ունեցող Թեհրանի, այնպես էլ Երեւանի համար, որը հատկապես «այս ժամանակահատվածում» չէր ցանկանա արժանանալ ուժային բեւեռներից որեւէ մեկի դժգոհությանը:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

# Ո՞վ ո՞ւմ հետ է տունտունիկ խաղում

*1-ին էջից*

**Իսկ որ Քոչարյանը չի պատրաստվում երիտասարդ թոշակառու մնալ՝ դա երեւում է անգամ նրանից, որ նա չի բավարարվել մեկ-երկու՝ իրենը համարվող լրատվամիջոցներով, 1-in.am-ի նման՝ ստեղծել է 2-rd.am, իսկ պարզ բան է, կայքերն ու թերթերն ավելանում են ընտրություններից առաջ, ընտրությունների ֆավորիտի ասելիքը տեղ հասցնելու համար: Այնպես որ՝ առաջինի եւ երկրորդի տեղեկատվական պատերազմներին սպասենք, որպես դրա առաջին արձագանք Տեր-Պետրոսյանի ելույթն ու այդ ելույթին Քոչարյանի արձագանք-հարցազրույցը դիտելով:**

**Գալով երկխոսելու թեմային՝ մի անգամ եւս նկատենք, որ ՀՀԿ-ականների վերջին օրերի պահվածքը թույլ է տալիս ենթադրել՝ կամ նրանք տեղյակ չեն գործընթացներից, կամ «երկխոսություն-երկխոսություն» ասող ՀԱԿ-ի բերանը չի քաղցրանում, քանի որ նրանք ցանկալին իրականի տեղ են դնում, իսկ իշխանությունը բնավ էլ երեւութական բառախաղից բացի՝ գործնական քայլ չի ուզում անել: Երկխոսել այն բանի շուրջը, որ քեզ իշխանությունից զրկեն՝ քաղաքագիտական, գիտական եւ անգամ մասնագիտական չէ: Բացի դրանից՝ դեռ չի խոսում գլխավոր մրցավարը՝ նախագահ Սարգսյանը: Այդ առումով հասկանալի է ՀՀԿ-ական քաղաքական գործիչների՝ ափլփելով կարծիք հայտնելու պատճառը, նրանք իրականում չգիտեն հաջորդելիքը: Գ. Սահակյանն ասում էր, որ իրենց օրակարգում պատվիրակություն կազմելու խնդիր չկա՝ կուսակցական մարմինները հենց այդպիսի հարցեր լուծելու համար են ստեղծված, կարող են նստել-խոսել, մամուլով-հեռուստատեսությամբ, կլոր սեղանով, սեմինար-բանով շփվել:**

**ՀԱԿ-ի օրակարգն էլ հեղհեղուկ մի բան է (մենք կասեինք՝ հեղուկ), արտահերթ-մարտահերթի մասին ծիծաղելի է խոսելը, տունտունիկ է խաղում ՀԱԿ-ը՝ իրենք էդ խաղը չեն խաղում, բացի այդ էլ՝ կարո՞ղ է ՀԱԿ-ն ուզում է առանց ջանք թափելու իշխանության գալ: Բացի այդ էլ՝ ՀԱԿ-ը խոմ մենակ չէ՞, այլ ընդդիմադիր ուժեր էլ կան, ինչո՞ւ պիտի ողջ ընդդիմադիր ուժերի անունից ՀԱԿ-ը ներկայանա, հո ՀԱԿ-ի ամբիցիաներին չե՞ն տրվելու: Բայց որ ուզում է երկխոսել, ասում է Գ. Սահակյանը, ժամ ու տեղ թող ասի, քանի հոգով գալիս են- գան՝ խոսենք: Իսկ արտահերթ ընտրությունները ՀԱԿ-ը թող մտքից հանի, նախադրյալ չկա, համ էլ՝ ամեն արտահերթ հետ է գցում զարգացումը, սա իր հայտարարության մեջ Շարմազանովն էր գրել: Նույնն ասում էր Նախագահի աշխատակազմի ղեկավարի մտերիմ, ՀՀԿ-ական Մկրտիչ Մինասյանը՝ թե արտահերթ ընտրություններ թելադրող իրավիճակ եւ կրիտիկական զանգված այսօր չկա:**

**Իսկ Հմայակ Հովհաննիսյանը (ով ոչ մի ուժ չներկայացնելով՝ ինչ ուզի-կխոսի), հակառակը, համոզված էր, որ երկխոսությունն ավելի իշխանությանն է ձեռնտու, քան ընդդիմությանը, խաղն իշխանության սցենարով է, այ, եթե երկխոսությունը չլիներ՝ գուցե եւ հնարավոր լինեին արտահերթ ընտրություններ: Հմայակն ասում էր, թե Յովանովիչի հանդիպումից հետո է կազմվել ՀԱԿ-ի՝ երկխոսող ցուցակը. սա չգիտենք որքանով մոտ կլինի իրականությանը, բայց որ Յովանովիչի անվան շուրջն այս օրերին լեգենդները շատ են, ընդհուպ Ահմադինեժադի այցի հետաձգում, սա կա: Որ՝ երկխոսությունը ձեռնտու է նաեւ Արեւմուտքին (սա էլ էր Հ. Հովհաննիսյանն ասում), քանի որ Ղարաբաղյան հարցի լուծման եւ հայ-թուրքական երկխոսության վերակենդանացման հեռանկար կա... տարրական տրամաբանությամբ անգամ սա տրիվիալ ճշմարտություն է:**

**Մոռացանք վերեւում ասել, որ Է. Շարմազանովը անընդունելի էր դիտել ընդդիմադիր դաշտի մոնոպոլիստի դիրքերից ՀԱԿ-ի խոսելը, իսկ ՀԱԿ-ի իրատեսական առաջարկները Հանրապետականը պատրաստ է ներկայացնել եւ պաշտպանել ԱԺ-ում:**

**Բա: Ասենք, որ երեկ ՀԱԿ-ի ֆորմատից հանդես եկած Ֆելիքս Խաչատրյանը (ՀԺԿ փոխնախագահ) արդեն կասկած է հայտնել իշխանության պահվածքի առումով, երբ նրան հարցրել են կարծիքը Գ. Սահակյանի այն ասածի վերաբերյալ, թե իշխանությունը երկխոսության գաղափարն ընդունելի է համարում, առաջարկվող ֆորմատը՝ ոչ. «Դրա մեջ ժամանակ շահելու միտում եմ տեսնում», ասել է Ֆ. Խաչատրյանը՝ նշելով, թե երկխոսությունն արտահերթ ընտրության շուրջ է պատկերացնում միայն, իսկ եթե դա տեղի չունենա՝ ՀԱԿ-ը հաջորդ քայլն է անելու (ոնց վախեցանք):**

**Երեկվա ողջ տրամադրությունը ներկայացրած չենք լինի, եթե չփոխանցենք ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանի տրամադրությունը, որի ասուլիսն ավելի շատ երրորդ դիրքն ուներ: Նա ասում էր, թե երկխոսության արդյունքում համատեղ հարձակում է սկսվել ՀՅԴ-ի վրա՝ հիստերիկ եւ բացարձակապես անհիմն հարձակումներ, բայց եւ... շնորհակալություն, քանի որ այդ պատճառով երկրում վերսկսվում է գաղափարական պայքարը: Ըստ նրա՝ անհանգստանալու տեղ ՀԱԿ-ն ունի՝ միտինգավորը պակասում է: Իսկ որ ՀԱԿ-իշխանություն երկխոսությունը ժողովուրդ-իշխանություն երկխոսություն են համարում, դա ճիշտ չէ, քանի որ ժողովրդի մի մեծ զանգված իր ձայնը չի տվել ոչ մեկին: Տեր-Պետրոսյանի ելույթի՝ ՀՅԴ-ին ուղղված հատվածին, թե ղարաբաղյան պատերազմի ժամանակ ՀՅԴ-ն ներսից պղտորում էր ներքաղաքական իրավիճակը, Վ. Հովհաննիսյանն այսպես արձագանքեց. «ՀՅԴ-ն այդ ժամանակ գրեթե ամբողջությամբ ճակատում էր, էդ պետք է տականք լինես, որ նման բան հայտարարես...»**

**Դե, իսկ կուլիսներում, ոչ հրապարակային խոսքուզրույցում անընդունելի են համարում ԱՄՆ դեսպան Յովանովիչի՝ մեր երկրի ներքաղաքական կյանքին խառնվելու երեւույթը: Վերլուծաբաններից մեկն անգամ նմանություններ էր գտել Յովանովիչի գնահատականների եւ ՀԱԿ-ի պահանջների միջեւ՝ եզրակացնելով, թե կամ Յովանովիչն է տեր կանգնում ՀԱԿ-ի պահանջներին, կամ ՀԱԿ-ն է կատարում դեսպանի պատվերը, երկու դեպքում էլ մրցավարի դերում դիվանագետ տիկինն է: Եվ դա վտանգավոր է դիտվում Դովիլ-Կազան ուղղության վրա, ղարաբաղյան բանակցությունների վրա ճնշում գործադրելու տեսակետից:**

**Որպես այս բոլորի եզրակացություն մի միտք կարող ենք առաջարկել. անկախ դրդապատճառներից, անկախ ճնշողներից եւ ճնշվողներից, անկախ մթնոլորտը լիցքաթափելու եւ կայունության պահպանման կարգախոսներից՝ չի՛ երեւում, թե ինչի շուրջն են բանակցելու ՀԱԿ-ն ու իշխանությունը, ո՞րն է բանակցելու ձեւաչափը (կուսակցախումբ-պետությո՞ւն, կուսակցախումբ-կոալիցիա՞, թե՞ կուսակցախումբ-ՀՀԿ): Բոլոր դեպքերում այս հարցերի պատասխանը կարող է տալ մեկ մարդ՝ գիտեք, թե ով:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Կազանից առաջ՝ ինչպես Սոչիից հետո

Ադրբեջանի խորհրդարանն սպառել է գարնանային նստաշրջանի օրակարգը: Բայց պատգամավորներին արձակուրդ չի տրվել: Այդ առթիվ Միլլի մեջլիսի մամլո ծառայությունն ասել է, որ «հունիսին կարող է գումարվել արտահերթ նիստ»: Որեւէ այլ մանրամասնություն, թե ինչ հրատապ հարցեր են քննարկման առարկա դառնալու, չի հրապարակվել:

Դրա փոխարեն արտահերթի սպասող պատգամավորներն սկսել են այցելել «մերձճակատային շրջաններ»: Հունիսի 3-ին մեջլիսականների մի խումբ գտնվել է, ըստ երեւույթին, շփման գծի Աղդամի հատվածում: Նրանց ուղեկցել է պաշտպանության նախարարության խոսնակ Էլդար Սաբիրօղլուն, որը հենց տեղում մամլո ասուլիս է կազմակերպել եւ մի քանի սադրիչ հայտարարություններ արել: Եթե մի կողմ թողնենք արդեն սովորական դարձած սպառնալիքները, ապա նրա խոսքերից թերեւս առանձնացվի այն, թե իբր «Հայաստանն ամեն օր Ադրբեջանին դավագրգռում է պատերազմի»: Ընդ որում, այսպես ասելիս Սաբիրօղլուն հասկապես շեշտել է «ադրբեջանական խաղաղ բնակավայրերում ապրող մարդկանց ամենօրյա գնդակոծումների փաստը»:

Պաշտպանության նախարարության մամլո խոսնակի այս «գնահատականն» ադրբեջանական լրատվամիջոցները տարածել են նույն օրը՝ ժամը 15-ի սահմաններում: Մենք դա հատուկ ենք ընդգծում, քանի որ նույն օրվա վերջին Trend գործակալության «տարածաշրջանային թղթակիցը մի հաղորդագրություն է հղել», թե «հայկական զինված ուժերի կողմից սպանվել է Աղջաբեդիի շրջանի բնակիչ Էլմար Փիրիեւը, որն Աղդամի շրջանի Չեմենլի գյուղի մերձակայքում, զորքերի շփման գծի վրա, անասուն էր արածեցնում»: Ընդ որում, «հաղորդագրության» մեջ խոսք չկար «միջադեպի» օրվա եւ ժամի մասին:

Նախ, ինչո՞ւ Աղջաբեդիի շրջանի բնակիչն «անասուն արածեցնելու համար հասել է Աղդամի շրջանի Չեմենլի գյուղ»: Իր շրջանում արոտավայր չկա՞: Երկրորդ, եթե դա նույնիսկ այդպես էր, նա չէր կարող «զորքերի շփման գծի վրա անասուն արածեցնել»: Հակառակ դեպքում պիտի ընդունել, որ ադրբեջանական բանակում կարգապահություն ասվածը գոյություն չունի, եթե ամեն մի պատահական մարդ «շփման գծի վրա անասուն է արածեցնում»: Իսկ դա էլ չի համապատասխանում «Հարավային Կովկասի ամենաուժեղ բանակի» մասին նույն Սաբիրօղլուի նույն օրն ասածին: Իսկ եթե Փիրիեւն «անասուն էր արածեցնում» ոչ առաջապահ դիրքերում, ապա «հայկական զինված ուժերը նրան ինչպե՞ս են սպանել»: Մանավանդ որ «հաղորդագրության» մեջ չի ասված, թե ինչպե՞ս է «սպանվել Փիրիեւը, ո՞րն է նրա մահվան պատճառը»:

Տպավորությունն այն է, որ Trend-ի «տարածաշրջանային թղթակիցն ընդամենը հաստատել է այն», ինչ դրանից ժամեր առաջ «գիտեր» ՊՆ մամլո խոսնակը: Այսինքն, տեղեկատվական հոսքը կազմակերպվել է այնպես, որ «Ադրբեջանին պատերազմի դավագրգռելու տեսությունը փաստով հիմնավորվի»: Այս զգացողությունն ավելի է խորանում, երբ նույն «հաղորդագրությանն» ի հավելումն՝ ադրբեջանական լրատվամիջոցները կրկին անդրադառնում են «մարտի 8-ին հայ դիպուկահարի կրակոցով սպանված երեխայի» թեմային:

Այդ կապակցությամբ հայկական կողմերի թե՛ պաշտոնական, թե՛ փորձագիտական շրջանակներն սպառիչ մեկնաբանություններ արել են: Կրկնելու կարիք չկա: Ասենք միայն, որ Ադրբեջանը, ինչպես միշտ, խուսընդոտել է «միջադեպի» անաչառ եւ բոլոր կողմերի մասնակցությամբ հետաքննությանը, ինչի մասին պայմանավորվածություն ձեռք էր բերվել Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ՝ մարտի 5-ին Սոչիում կայացած հանդիպմանը:

Ներկա դրությամբ միջնորդներն ու փորձագիտական հանրությունը հույս են փայփայում, որ Կազանում կայանալիք հանդիպումը «կարող է առաջընթացային լինել»: Նրանք ակնկալում են, որ առնվազն խնդրի խաղաղ կարգավորման անայլընտրանքայնության շուրջը կողմերը հստակ դիրքորոշում կարտահայտեն: Ըստ ամենայնի, Դովիլի եռակողմ հայտարարությամբ դրսեւորված գլխավոր ցանկությունն էլ հենց դա է: Բայց, կարելի է ենթադրել, Իլհամ Ալիեւը նման մտադրություն չունի: Հունիսի 6-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հանդես է եկել «Շփման գծում իրավիճակը կրկին լարվում է» վերնագրված հաղորդագրությամբ, որն ավելի շատ «ռազմաճակատային ամփոփագիր» է հիշեցնում:

Պատահակա՞ն է արդյոք ադրբեջանական կողմից իրավիճակի նման «ընկալումը»: Կարծում ենք՝ ոչ: Տարածաշրջանում սպասում են ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին: Իսկ նրանք ժամանում են առաջիկա բարձր մակարդակի հանդիպումը նախապատրաստելու: Եվ այս պահին Բաքուն վերստին խաղարկում է «պատերազմի անխուսափելիության գործոնը»: Այն էլ՝ արտգործնախարար Մամեդյարովի Վաշինգտոնյան այցից անմիջապես հետո:

Ավելորդ չէ նկատել տալ նաեւ, որ եթե օրեր առաջ Թուրքիայի արտգործնախարարն Իլհամ Ալիեւի հետ Հռոմում անցկացրած «տեւական հանդիպումից հետո» հույսով էր արտահայտվել Կազանի հանդիպման մասին, ապա վարչապետ Էրդողանն, ընդհակառակը, սկսել է «կասկածել Դմիտրի Մեդվեդեւի միջնորդության հաջողությանը»:

Ի՞նչ է փոխվել երկու-երեք օրում: Գուցե Մամեդյարովին Վաշինգտոնո՞ւմ են ինչ-որ «բան ասել»: Ամեն դեպքում Իլհամ Ալիեւը որոշել է Կազանից առաջ անել այն, ինչ արել էր Սոչիից հետո: Դա, թերեւս, համաձայնություններից խույս տալու նրա վերջին հնարավորությունն է: Իսկ գուցե հենց դրա համա՞ր է, որ պատգամավորներին առժամանակ «զգաստ սպասելու» հրաման է տրվել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

***ՀԵՐԹԱԿԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՁՈՀԸ***

# «Ես նման բան չեմ ասել»

**Այսպիսի արտահայտություն մեկ անգամ չէ, որ անում են տարբեր քաղաքական գործիչներ, երբ առիթ են ունենում դառնալու ադրբեջանական գործակալությունների հարցազրույցի սուբյեկտներ կամ ուղղակի հայտնվելու նրանց ուշադրության կենտրոնում, երբ որեւէ հայտարարություն են անում՝ հայկական կամ ղարաբաղյան համատեքստով: Այսպիսի հայտարարությունների, իսկ ավելի շուտ՝ առնվազն բանավոր հերքումների տեքստով հաճախ ու, գուցե ոչ իրավամբ, հանդես է եկել ու դեռ թերեւս հանդես կգա ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ, ներկայումս Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզան:**

**Եվ ոչ միայն նա: Քանիցս առիթ ենք ունեցել «Ազգի» ընթերցողներին ներկայացնելու եվրոպական ու ամերիկյան տարբեր պաշտոնյաների հերքումները ադրբեջանական լրատվամիջոցներում տպագրված ու նրանց վերագրվող հայտարարությունների առնչությամբ:**

**Հերթականն այս շարքում դարձել է շվեդ խորհրդարանական, արտաքին հարաբերությունների շվեդական խորհրդարանական հանձնաժողովի անդամ եւ եվրոպական խորհրդի անդամ Դեսիրի Պետրուսը: Հունիսի 3-ին ադրբեջանական պետական լրատվական գործակալություն «Ազերթաջը» հրապարակել էր, թե շվեդ խորհրդարանականը Շվեդիայի ադրբեջանցիների կոնգրեսի հետ հանդիպման ժամանակ «պատմական սխալ է» որակել Շվեդիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը որպես այդպիսին որակող որոշման կայացումը:**

**«Բարի օր: Ոչ, ես նման բան չեմ ասել», ադրբեջանական գործակալության հրապարակման առնչությամբ շվեդահայ Վահագն Ավետյանի հարցմանն այսպես է արձագանքել շվեդ խորհրդարանական Պետրուսը: Ըստ պատասխան նամակի. «Ես ասել եմ, որ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության դիրքորոշումը խորհրդարանական քվեարկության առնչությամբ այն էր, որ մենք չենք գտնում, որ խորհրդարանը պետք է քվեարկի ընդհանրապես ցեղասպանության հարցերով», պարզաբանել է Պետրուսը եւ ավելացրել. «Այդպիսի որոշումներ պետք է ընդունեն միջազգային դատարանները»:**

**Միեւնույն ժամանակ, Պետրուսը պարզաբանել է, որ իր կուսակցությունը գտնում է, որ իսկապես պետք է ճանաչել Հայաստանում պատահած ցեղասպանությունը: «Այդ առնչությամբ մենք որեւէ առարկություն չունենք», ասել է շվեդ խորհրդարանականը՝ ադրբեջանական գործակալության հրապարակման առնչությամբ ընդգծելով, որ հաճախ «մեջբերումներն ընտրվում են՝ հարմարեցվելով սեփական խմբին»:**

**Վահագն Ավետյանը ադրբեջանական ծուղակում հայտնված պատգամավորին հիշեցրել է, որ հենց նրա իսկ կուսակցության՝ քրիստոնեա-դեմոկրատների գործադիր խորհուրդը Ցեղասպանության ճանաչման առնչությամբ քվեարկության օրը իր մամլո հաղորդագրության մեջ գրել էր, որ մինչ այդ պահը երկրում գործող կոալիցիայի պայմաններում չի կարող քվեարկությանը ձայն տալ, բայց կաշխատի այդ խնդրի օրինական ընդունման ուղղությամբ:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Շվեյցարահայ թեմի հարցը կլուծվի իրավական ճանապարհով

## *Քահանան կարգալույծ է հռչակվել, սակայն շարունակում է քահանայագործությամբ զբաղվել*

«Մեծագույն կեղծավոր անհավատության դրսեւորում: Բացարձակ տգիտություն»: Այսպես է բնութագրում տեր Աբել քահանայի՝ մի քանի օր առաջ կաթողիկոսին ուղղված «ո՛չ ձեզանից կարգ ստանալն էր պատիվ, ո՛չ էլ կարգալույծ հռչակվելը անպատվություն» հայտարարությունը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ **Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը**:

«Տասնյակ տարիներ պահել եւ օգտագործել կաթողիկոսից ստացած կարգը, իսկ դրանից զրկվելուց հետո հայտարարել, թե դա իր համար անպատվություն չէր: Կաթողիկոսի կողմից կարգ տրամադրված լինելն ինքն իբրեւ եկեղեցական շատ լավ պիտի իմանար, որ առաքելական հաջորդականությամբ գալիս է Քրիստոսից: Սա հավատքի հիմնական դրույթի նկատմամբ անհավատարմություն է», ասում է նա: Շվեյցարահայ թեմի առնչությամբ մի քանի ամիս շարունակվող աղմկահարույց իրադարձությունը մոտ երկու տասնամյակի պատմություն ունի:

Արշակ եպ. Խաչատրյանի գնահատմամբ՝ Շվեյցարիայի հայոց թեմում անհնազանդություն դրսեւորողներն իրենց դրել են եկեղեցական կառույցից դուրս:

«Անհնազանդությունը եկեղեցական իշխանությունը դատապարտում է նզովքով, վտարմամբ կամ հաղորդությունից զրկելով»:

Շվեյցարիայում հայոց թեմի հիմնադրման խնդրանքով 1985-ին Շվեյցարիայի հայկական համայնքը դիմում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին՝ խնդրելով Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու, Ցյուրիխի, Նեոշաթելի եւ Լուգանի ծխերի հիման վրա ձեւավորել թեմ:

Թեմը ձեւավորվում է 1992-ին՝ Վազգեն Ա կաթողիկոսի կարգադրությամբ: 1993-ին հռչակված նոր վարչությունը որոշում է հրաժարվել թեմական կառույցից՝ ցանկություն հայտնելով վերադառնալ ծխական համակարգին եւ ապրել այդ կանոնադրությամբ: 1994-ին Աբել քահանան առանց կաթողիկոսի թույլտվության եւ գիտության, Կանադայի իր ծառայության վայրից ժամանում է Շվեյցարիայի թեմ եւ քահանայական գործունեություն ծավալում:

Տեր Աբելի Շվեյցարիա տեղափոխումը համընկնում է Վազգեն կաթողիկոսի հիվանդությանը եւ մահվանը:

Հետագա տարիներին Աբել քահանա Մանուկյանին հորդորներ, կոչեր եւ հանդիպման հրավերներ են ուղարկում Գարեգին Ա եւ Բ կաթողիկոսները:

Ներսես արք. Պոզապալյանը, որ այն ժամանակ Մայր աթոռի դիվանապետն էր, մեկնում է Շվեյցարիա, սակայն քահանան հանդիպմանը չի ներկայանում:

«Գարեգին Բ կաթողիկոսի երկու հրավերներին տեր Աբելը պատասխանել է նամակով, թե այս պահին համայնքում լարված դրություն է, ինքը չի կարող թողնել-գալ Հայաստան: Հետագայում կաթողիկոսը Հայաստանից մեկնելիս տեր Աբելին հանձնարարում է հանդիպել եւ խնդիրները քննարկել եկեղեցական վարչության հետ: Սակայն քահանան արձագանքում է, թե իր համար նվաստացուցիչ է վարչության անդամների հետ հանդիպելը, ինքը կհանդիպի միայն կաթողիկոսին:



Սուրբ Հակոբ եկեղեցու կանոնադրությամբ թեմում կարող է ծառայել միայն այն հոգեւորականը, ում ներկայացնում է Էջմիածինը:

«Մինչդեռ Էջմիածնին որեւէ ձեւով չէին ներկայացվել կանոնադրական փոփոխություններն ու եկամուտների տնօրինման հաշվետվությունները: Նաեւ Շվեյցարիայում գործող հիմնադրամներում Էջմիածինը՝ որպես հիմնադիր, ներկայացվելու հնարավորություն ունի, իսկ այդ մասին Էջմիածնին չեն իրազեկել», շարունակեց Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը՝ հավելելով, որ արդեն վաղուց տեր Աբելն ինքնագործունեություն է ծավալում:

Ներկա դրությամբ Աբել քահանան կարգալույծ է, սակայն շարունակում է իրականացնել քահանայագործություն. հետեւաբար խնդիրը պետք է քննարկել իրավական հարթությունից:

Հունիսի 1-ին Մայր աթոռը նամակ է ստանում Աբել քահանայի իրավաբանից՝ հասցեագրված Կտրիճ Ներսիսյանին (Վեհափառի աշխարհիկ անունն է-Հ.Հ.), որտեղ գրված է. «Եթե կարգալույծ անեք Աբել քահանային, մենք Շվեյցարիայի օրենքներով կփորձենք պաշտպանել Աբել քահանային եւ քրեորեն պատժել Ամենայն հայոց կաթողիկոսին, քանի որ եկեղեցական խորհուրդն է Աբել քահանայի գործատուն»:

Խաչատրյանի փոխանցմամբ՝ կոնֆլիկտի պատճառն ու քահանայի անհնազանդությունը հստակ են:

«Նյութական շահագրգռվածություններ ունեն եւ դրանցից չեն ուզում հրաժարվել: Աբել քահանան իր ծառայությունների դիմաց ստանում է ամսական 8.000 եվրո աշխատավարձ, իր համայնքի հետ ունի 7.5 տարվա պայմանագիր»:

Եպիսկոպոսը հերքում է լուրերը, թե շվեյցարահայ համայնքի հարցում Էջմիածինը նյութական շահագրգռվածություն ունի:

«Ըստ Էջմիածնի թեմական ուղենշային կանոնադրության՝ թեմերն իրենք են տնօրինում իրենց նյութական միջոցները, անշարժ գույքը: Թեմի լուծարման դեպքում միջոցները փոխանցվում են Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին: Գուցե նրանք ուզում են, որ իրենց միջոցները փոխանցվեն որեւէ մզկիթի՞»:

Ներկա դրությամբ Մեսրոպ վրդ. Պարսամյանին թույլ չի տրվում եկեղեցում պատարագներ մատուցել: Մայր աթոռը պատրաստ է հարցերն իրավական ճանապարհով լուծել: Շվեյցարիայի մյուս՝ Մայր աթոռի հավատարիմ Ցյուրիխի, Նեոշաթելի եւ Լուգանի հայկական եկեղեցիների ներկայացուցիչները կդիմեն դատարան՝ պահանջելով, որ եկեղեցին վերադարձվի համայնքին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հ. Գ. Անդրադառնալով լուրերին, որ ամենաշատ կարգալույծ են եղել Գարեգին Բ կաթողիկոսի օրոք, Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը հերքեց դրանք՝ հավելելով, որ կաթողիկոսի հայրապետության ժամանակ կարգալույծ է եղել 40 հոգեւորական, կարգ ստացել՝ 300:**

# Նիսի հայ եկեղեցւոյ տագնապը եւ մեր ինքնութեան հարցերը

Ժպիտով կը յիշեմ տարիներ առաջ իմ անհաւատ հրեայ բարեկամիս հետ ունեցած հետաքրքրական զրոյցս, երբ զարմանքով իրեն հարց կու տայի, թէ ինչո՞ւ կարեւոր նիւթական եւ բարոյական օժանդակութիւն կը յատկացնէր իր սինագոգին:

Ան զարմացած հայեացքը դէմքիս ուղղած՝ քմծիծաղով մը կ՚ըսէր. «Ես գիտէի թէ դուք հայերդ ընդհանրապէս շատ խելք չունիք, բայց գոնէ քեզմէ այս հարցումը չէի սպասեր: - Ան կը շարունակէր,- ես իբր հրեայ՝ երբեք իրաւունք չունիմ անտարբեր մնալու մեր ինքնութեան ողնայարին՝ մեր կրօնական հաստատութեան հանդէպ»:

Այս տողերէն ետք վերադառնանք Նիսի Հայ առաքելական եկեղեցւոյ, աւելի ճիշդ՝ մատուռին շուրջը ստեղծուած եւ մինչեւ այսօր շարունակուող տագնապին:

Նկատի ունենալով, որ, ինչպէս իւրաքանչիւր տագնապ, այս մէ՛կն ալ ունի իր բարոյահոգեբանական դրդապատճառներն ու ծալքերը, փորձենք վերլուծել այս ցաւալի իրավիճակը, որ սկիզբ առաւ տարիներու վրայ կուտակուած անհանդուրժողական մթնոլորտի մը մէջ, ծաւալեցաւ փոխադարձ ամբաստանութիւններով եւ հասաւ ոստիկանական եւ դատական ու իրաւական մարմիններու ուղղակի միջամտութիւններուն:

Այս դէպքերուն պատճառը հեռուէն հետեւողի մը համար կրնայ շատ պարզ թուիլ, որն է անհամաձայնութիւն մը հոգեւոր հովիւին եւ ծխական խորհուրդին միջեւ:

Մօտենանք եւ փորձենք հասկնալ աւելին ու լսենք երկու կողմերուն հիմնական ամբաստանութիւնները:

Կողմի մը համար անընդունելի են Տէր հօր կղերականի անյարիր վարքն ու անոր շուրջը հաւաքուած յիսուն հայաստանցի «խուլիգաններու» եկեղեցին գրաւելու փորձերը: Հոս, իրենց համար լուծումը կը կայանար Տէր հօր հեռացման մէջ:

Հակառակորդ կողմին համար ծխական խորհուրդը կը ներկայացնէ կողմնակալ եւ փտած համակարգ մը, որ Նիսի գաղութին կեանքը տասնամեակներէ ի վեր կը ղեկավարէ: Հետեւաբար եկեղեցին եւ հայկական միութիւններն ու հաստատութիւնները պէտք է ձերբազատին այդ խորհուրդէն:

Յարգելով հանդերձ Նիսի իւրայատկութիւնները, կը կարծեմ թէ անոր նմանութիւնները ֆրանսահայ այլ գաղութներու եւ միութիւններու հետ բաւական շատ են. խնդրին արմատները իմ կարծիքով կը կայանան հետեւեալ կէտերուն մէջ՝

1. Մեր եկեղեցական թէ աշխարհիկ միութիւնները, յաճախ այլեւայլ պատճառներով, տարիներէ ի վեր կը ղեկավարուին նոյն անձերուն կողմէ, ոչ ժողովրդավար պայմաններու մէջ: Երեւոյթ մը, որ կը սահմանափակէ նիւթաբարոյական անկեղծ հաշուետուութեան տարրական սկզբունքի կիրարկումը:

2. Ընդհանրապէս հայ համայնքներու ինքնակոչ «ներկայացուցիչները» ժամանակի ընթացքին դարձած են պաշտօնական ատեաններու կամ հզօր կազմակերպութիւններու «խօսափողը» հայ համայնքներէ ներս: Այս երեւոյթը ունի իր պատմահոգեբանական արմատները: Օրինակ՝ Օսմանեան կայսրութեան մէջ ազգային բարերար մեր ամիրաներու մեծամասնութիւնը ոչ թէ հայ ժողովուրդի ցաւերն ու պահանջքները կը հասցնէին սուլթաններուն, այլ անոնց ձայնն էին մեր ժողովուրդին մօտ:

3. Իրարամերժ մթնոլորտ մը կը տիրէ երկար տարիներէ ի վեր, մէկ կողմէ Ֆրանսա հաստատուած եւ տարբեր բնագաւառներու մէջ յաջողութիւններ արձանագրած ու արեւմտեան բարքերուն յարած խաւին, եւ միւս կողմէ Հայրէնիքէն վերջին քսան տարիներու ընթացքին արտագաղթած զանգուածին միջեւ, որոնք ընդհանրապէս անտեղեակ են տեղական բարք ու վարքին:

4. Հայրենիքէն եկող երիտասարդ հոգեւորականը, որն ունի հարուստ կրօնական պատրաստութիւն, յաճախ կը դժուարանայ լեզու գտնել սերունդներ շարունակ տարբեր արժէքային համակարգի մը մէջ ապրած իր ազգակիցներուն հետ: Միւս կողմէ պէտք է ընդունիլ, որ անցնող տասնեակ տարիներու ընթացքին չենք յաջողած ոչ իսկ մէկ հոգեւորական պատրաստել մեր արեւմտեան համայնքներէն ներս: (*)

5. Մեր եկեղեցւոյ շուրջը գտնուող զանգուածը ու եկեղեցական կեանքին դերակատար բազմաթիւ աշխարհականներ, անտեղեակ են դարերու ընթացքին մեր ազգային ինքնութիւնը կերտած կրօնական եւ ծիսական գիտելիքներուն. այս իրավիճակին որպէս հետեւանք՝ ականատես կ՚ըլլանք կամ կը լսենք օրինակ հետեւեալ անցուդարձերուն մասին՝

- Միութենական պատասխանատուներ, որոնք թոյլ չեն տար Տէր հօր «Հայր Մեր»-ով սկսիլ հանդէս մը՝ օտար հիւրերու ներկայութեան պատրուակով:

- Հարսնեւորներ կամ յուղարկաւորներ, որոնք Հայկական եկեղեցին կը փոխարինեն օտար եկեղեցիով մը՝ այս մէկը քաղաքին կեդրոնը գտնուելուն կամ աւելի ընդարձակ ըլլալուն համար:

- Ընտանիքներ որոնք զանազան պատճառներով կմոխրացնեն (crémation) իրենց հանգուցեալը, հեռանալով մեր կրօնական աւանդութիւններէն:

6. Մենք իբր ազգ մեր ենթագիտակցութեան մէջ տակաւին չունինք պետական մտածելակերպ եւ հասկացողութիւն. այսօր նոյնն է պարագան նոյնիսկ Հայաստանի մէջ, ուր չէ ձեւաւորուած քաղաքացիի (citoyen) կերպարը. հետեւաբար, կը շփոթենք անձնական եւ ընտանեկան շահերը ազգային շահերու հետ եւ իբրեւ հետեւանք բնականաբար կը շփոթենք՝

- Մեր անձնագիրը մեր ազգային ինքնութեան հետ

- Մեր ծննդավայրը մեր հայրենիքին հետ

- Մեր եկեղեցւոյ Տէր հայրը մեր եկեղեցիին հետ, կամ ալ Հայ եկեղեցւոյ ամենաբարձր ծառան հանդիսացող կաթողիկոսը մեր դարաւոր Մայր աթոռին՝ Սուրբ Էջմիածնին հետ:

Սփիւռքի արեւմտեան երկիրներու մէջ Հայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին միջեւ գտնուող հեռաւորութիւնը կը վերածուի վիհի, եթէ աւելցնենք լեզուական խնդիրը: Այսօր այդ հայութիւնը անծանօթ է ծիսակատարութիւններու լեզուին՝ գրաբարին, եւ նոյնիսկ շատ յաճախ հայերէնին:

Այսօր կ՚ամբաստանուի Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը ֆրանսահայ համայնքի եկեղեցական գոյքերը սեփականացնելու միտումներ ունենալու յանցանքով: Միւս կողմէ պէտք է ընդունիլ, որ մեր երիտասարդութեան մեծամասնութիւնը, հիմնականին մէջ մեր դաստիարակութեան պատճառով, կը հեռանայ մեր եկեղեցիէն, կորսնցնելով հոգեւոր անգնահատելի հարստութիւն մը: Այն, ինչ կը վերաբերի նիւթեղէն հարստութեան, հարց կու տամ, որ եթէ շարունակենք այս ընթացքը, որո՞ւ պիտի ժառանգենք մեր եկեղեցական գոյքերը. աճուրդի պիտի հանուին անոնք, կամ լաւագոյն պարագային յիշատակի կոթողներու պիտի վերածուին... Այսօր կ՚արժէ յիշել հայկական բարձրաւանդակէն հեռու դարե՜ր շարունակ օտար երկիրները շէնցուցած ու այսօր պատմութեան էջերուն անցած հայ գաղութներու պարագան:

Ազգային հասարակական կեանքէն ներս անհամաձայնութիւններ կրնան ըլլալ, նոյնիսկ անհրաժեշտ են անոնք, քանի որ առողջ մտքերու եւ կեցուածքներու սնանկութեան հետեւանքը նոյնքան կործանարար է: Հարցը հոս չէ. այս միտքը բոլորին կողմէ ընդունուած իրականութիւն մըն է. խնդիրը անհամաձայնութիւնները լուծելու ձեւերուն մէ՛ջ է որ կը կայանայ:

Օրինակ, ինչպէ՞ս ընդունիլ ծխական խորհուրդի նախագահին եկեղեցի մուտքը արգիլումը, կամ ծխական խորհուրդի անօրինական ընտրութիւններու կազմակերպումը, զայն ուժով խափանելը, եւ վերջապէս ցաւալին եւ անընդունելին՝ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին օգնութեան դիմումը, փրկուելու համար «էջմիածնի կղերապաշտական միտումներէն»: Մեր անցեալին եւ պատմութեան ծանօթ անձերուն համար նորութիւն չէ այս ստրկամտութիւնը. ոչ թէ հասարակ համայնքի ներկայացուցիչներ, այլ նոյնիսկ արքաներ կամ կղերականներ՝ յաճախ դիմած են երրորդ ուժերու օգնութեան, որպէսզի -թէկուզ ժամանակաւոր- կարենան պահել իրենց դիրքերը:

Այս բազմաշերտ խնդրի լուծումը կը պահանջէ բազմաթիւ քայլեր, բայց եւ այնպէս ամենաէականը այն է, որ հարցը պէտք է դիտուի ճիշդ տեսանկիւնէն:

Յստակացնենք եւ որպէս առաջին քայլ սկսինք տերմինաբանութեամբ (terminilogie):

Ֆրանսայի աշխարհական եւ ոչ համայնքային պետութեան մէջ, եւ CRIF-ը եւ Consistoire-ը ու այլ հրեայ կազմակերպութիւններ իրենք զիրենք կ՚անուանեն «Ֆրանսայի հրեաներ» (les Juifs de France), իսկ մենք՝ շատո՜նց ինքներս կնքած ենք «հայկական ծագումով ֆրանսացիներ» (Nous les français d'origine Arménienne...): Այս անուանումը արդիւնք է նախանջող իրավիճակի մը, բայց նաեւ իր հետքը կը ձգէ մեր էութեան, գաղափարներուն, հաւաքական կեանքին ու աշխատանքին վրայ:

Այսօր ֆրանսահայութեան գերակշիռ մեծամասնութիւնը, ինչպէս նաեւ մեր ազգային հասարակական եւ կրօնական միութիւններու որոշ պատասխանատուները կորսնցուցած են հայկական տեսանկիւնէն հարցերը դիտելու բնազդը, անոնք մեր ամենահիմնական ազգային հարցերը կը փորձեն լուծել օտարացած մտայնութեամբ:

Մեր շուրջը եղող շատ մը ծագումով հայերու մօտ մեր եկեղեցին կորսնցուցած է իր ազգային սրբութեան հանգամանքը, ան կը սեպուի լոկ որպէս կրօնական ընկերակցութիւն մը (association culturelle, loi 1901):

Մեզի համար յարգելի են բոլո՛ր այլ ինքնութիւններն ու պատկանելիութեան զգացումները. սակայն եթէ որոշած ենք դո՛ւս ելլել այս վիճակէն, մեր հաւաքական (ինչո՞ւ չէ՝ նաեւ անձնական) հարցերը դիտենք ու վերլուծենք հայկակա՛ն տեսանկիւնէն:

Հետաքրքրութեամբ պատրաստ եմ լսել տարբեր կարծիքներ, շինիչ դիտողություններ, մասնաւորապէս մեր «ծագումով հայ» անձանց կողմէ՝ իրենց ցանկացած լեզուով: Այսօր աւելի քան երբեք, ֆրանսահայ համայնքը յուզող– այս եւ այլ հարցերու գծով– հաւաքական ամփոփ հաշուետուութիւն մը կատարելու ու լուծումներ գտնելու հրամայականին դէմ յանդիման կը գտնուինք բոլորս:

**ՆՈՒՊԱՐ ՍԵՐՈՎԲԵԱՆ**
**Ֆրանսիա**

*(*) Վերջերս Նյու-Յորքի մոտ գտնվող Սբ. Ներսես հոգեւոր ճեմարանը վերջապես «պատրաստեց» մի հոգեւորական: Ի դեպ, այս հաստատությունը տարեկան մոտ մեկ միլիոն դոլար է խլում ազգից:* ***Խմբ***:

ՎԱՆԱՁՈՐ

# Համախմբվելով հայրենիքի ու եկեղեցու շուրջը

**Հունիսի 1-ին Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց եւ Շիրակի թեմերի եկեղեցասեր երիտասարդաց միությունները արդեն երկրորդ անգամ հանդիպեցին Գուգարաց թեմում՝ Վանաձորում: Փոխայցելությունների շրջանակներում առաջին հանդիպումը տեղի էր ունեցել 2010 թ. նոյեմբերին Գյումրիում:**

**Թեմակալ առաջնորդների օրհնությամբ Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու դահլիճում տեղի ունեցավ «Ի սեր Աստծո, ի սեր հայրենիքի» վերտառությամբ եւ «Սուր եւ խաչ» խորագրված միջոցառումը: Գյումրեցի երիտասարդները ներկայացրին հայ հոգեւոր, ժողովրդական երգեր, եղան դուդուկով կատարումներ, իսկ վանաձորցիները «Մայիսյան հերոսամարտերի» մանրամասներով ներկայացրին հայրենասիրական, ռազմական երգեր, պատմեցին դրվագներ հերոսամարտից: Միջոցառմանը մասնակցեց նաեւ Գուգարաց թեմի մանկական երգչախումբը: Հնչեցին կատարումներ Մակար Եկմալյանի, Կոմիտասի մշակումներից:**

**Միջոցառման ավարտին երկու թեմերն էլ պարգեւատրվեցին պատվոգրով, որը հանձնվեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի եւ Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Միքայել եպիսկոպոս Աջապահյանի կողմից:**

**Սեպուհ սրբազանն իր օրհնանքի ու գոհունակության խոսքն ուղղեց երիտասարդներին՝ ասելով. «Գնահատելի է ձեր աշխատանքը, սիրելի երիտասարդներ, քանզի մենք ամենօրյա կարիքն ու պարտքն ունենք հիշելու մեր նախնյաց, անդրադառնալու մեր պատմության լուսավոր, մաքառումով լեցուն էջերին, մաքառումով ի գին մահվան, բայց որոնց շնորհիվ այսօր ունենք խաղաղ ապրելու, ստեղծագործելու հնարավորություն: Սիրելի երիտասարդներ, ձեր արածը գովելի է, սակայն պետք է սրանով չբավարարվենք, պետք է ընդգրկենք ավելի լայն հատվածներ երիտասարդության՝ հասնելու նրան, որ յուրաքանչյուր հայի զավակ, յուրաքանչյուր երիտասարդ լինի եկեղեցասեր այնքան, որ առանձին երիտասարդաց միություններ ստեղծելու անհրաժեշտություն չունենանք ընդհանրապես. ամբողջանալ է պետք՝ ի պանծանս ազգիս հայոց, նրա հոգեւոր արժեքների: Ձեր մեջ տեսնում եմ այն շաղախը, որ Աստծո կամոք կարող է իրար կապել հայ երիտասարդներին՝ համախմբելով հայրենիքի եւ եկեղեցու շուրջը: Թո՛ղ ձեզ առաջնորդի հաղթանակներ կերտող միասնության այս գիտակցումը»:**

**Երիտասարդներին օրհնանքի խոսք հղեց նաեւ Շիրակի թեմի առաջնորդը. «Շատ ուրախալի է, որ մեր երիտասարդները համագործակցում են, շփվում ազգային մշակույթի ծիրում, չնայած սա մեր երիտասարդության շատ փոքր մասն է, եւ այստեղ մտածելու բան բոլորս ունենք՝ համախմբվելու, ամբողջանալու առումով: Միջոցառումը գեղեցիկ հնարավորություն էր՝ ներկայանալու ասմունքի, երգեցողության միջոցով: Մարդն օժտված է խոսելու ունակությամբ, որով էլ տարբերվում է կենդանական աշխարհից, բայց սրանով չի բավարարվում մարդը. աղոթում է, աղոթքով էլ չբավարարվելով՝ երգում է, երգում հայրենիք: Մեր երիտասարդները, համաձայնեցված թե իրարից անկախ, միջոցառումը կազմակերպելիս շեշտը դրել են հայի ինքնության խարսխի վրա՝ աստվածասիրություն եւ հայրենասիրություն: Ահա այս երկուսն է, որ համատեղելով՝ ունեցել ենք գովերգման արժանի հերոսամարտեր: Հայն առանց այս երկուսի համատեղման տկար է: Օրհնում եմ ձեզ, եղեք ավելի գործունյա, ավելի աշխատասեր ու միասնական, իսկ մեր օրհնությունն ու աջակցությունը կունենաք միշտ»:**

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

Ш²к²вафк°Вк

# Նկարազարդողը հայերեն գրքեր է թողարկելու



**«Ցանկանում եմ կենտրոնանալ հայերեն պատմվածքներ գրելու եւ նկարազարդելու վրա, երեխաները պետք է հայերեն կարդան, որպեսզի կարողանան ապահովել այդ լեզվի շարունակականությունը այս օտար ափերում», նշել է հիմնականում օտար լեզվով մանկական գրքեր նկարազարդող Ալիք Արզումանյանը: Նա արդեն սկսել է այդ ուղղությամբ աշխատել եւ հիմնել է տպագրական իր դրոշմը՝ «Գիրք-Միրք» վերտառությամբ: Նա արդեն գրել է իր առաջին պատմվածքը «Ծիրանի Անուշ» խորագրով, որը ոչ թե ծիրանի ջեմի մասին է, այլ երկվորյակ քույրերի, որոնք անընդհատ նոր անուններ են հորինում միմյանց համար: «Բացի զվարճալի լինելուց՝ պատմվածքը նաեւ նոր բառեր եւ նոր գաղափարներ մտահղանալու առիթ է տալիս երեխաներին», բացատրել է Ալիքը «Միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի թղթակից Դեֆնի Աբիլին:**

**Ալիքը ծնվել ու մեծացել է Լիբանանում, սովորել Բեյրութի Ամերիկյան համալսարանում, ապա աշխատանքի տեղավորվել Դուբայում, որտեղ հանդիպելով իր ապագա ամուսնուն՝ Սեւակին, տեղափոխվել է Անգլիա: Ներկայումս ամուսինները ապրում են Մ. Նահանգներում: Ալիքն Ամերիկայում ավարտել է Մասաչուսեթսի Արվեստի քոլեջը եւ դասավանդել է Ուոթերթաունի Հայկական տարրական վարժարանում:**

**Նրա նկարազարդած գործերի շարքում են Մարգարետ Մկդոնալդի «Թունջուր, Թունջուրը», որը պաղեստինցի մի կնոջ մասին է, որին երեխաների համար աղոթելու համար վարձահատույց են լինում կախարդական մի փոքրիկ կճուճ նվիրելով: Մյուս գիրքը հարավաֆրիկացի հոգեւորական Դեզմոնդ Թութույի «Աստծո երեխաները» աստվածաշնչյան ավանդապատումն է: Երրորդը՝ Հեստեր Բասսի «Այդքան շատ տներ» եւ չորրորդը՝ Սոնա Չեյթլյանի «Երախտապարտ կենդանիները»:**

**Այդ գործերով Ալիքը վերջերս մասնակցել է Բոլոնիայի գրքի տոնավաճառին:**

**Ալիքն ու Սեւակը աշխույժ գործունեություն են ծավալում Մ. Նահանգներում ինչպես հայկական, այնպես էլ ամերիկյան քաղաքական շրջանակներում: Նրանք համագործակցել են դեմոկրատ սենատոր Ջոն Քերրիի 2004 թվի նախագահական ընտրարշավին:**

**Ալիքը անդամ է Ամերիկայի Գրաֆիկական արվեստագետների գիլդիայի եւ երեխաների գրքերի հեղինակների ու նկարազարդողների ընկերության: Արժանացել է «Ամերիկյան գրադարանների ասոցիացիայի» մրցանակին 2007-ին:**

Հ. Ծ.

ԱԴՐԲԵՋԱՆ

# «Համկալն» ավելի ընկալունակ է

Զարդուշտ Ալիզադեի «Երկրորդ հանրապետության անկումը» գրքում զգալի տեղ է հատկացված Արազ Ալիզադեի՝ Այազ Մութալիբովի վրա ունեցած ազդեցությանը: Իսկն ասած, դա անհավանական էր թվում. ընթերցողը մտածում է, որ հեղինակը պարզապես տուրք է տվել հարազատ եղբորը բարձրացնելու գայթակղությանը:

Օրերս առիթ եղավ համոզվել, որ ոչ, Զարդուշտ Ալիզադեն բավական ճիշտ է ներկայացրել իրավիճակը: Ղարաբաղյան կարգավորման բանակցությունների թեմայով նախ հարցազրույց էր տվել Արազ Ալիզադեն, ապա՝ Այազ Մութալիբովը: Ի դեպ, նրանք նույն՝ Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության իրավահավասար համանախագահներն են: Տարբերությունն այն է, որ մեկն ապրում է Բաքվում, մյուսը՝ ինչ-որ տեղ «մերձմոսկվաներում»: Այն էլ՝ որպես «քաղաքական վտարանդի»: Թեեւ իրականում հայրենիք վերադառնալ չի կարող, քանի որ այնտեղ նրա դեմ «պետական դավաճանություն» մեղադրանքով քրեական գործ է հարուցված:

Մութալիբովը, հավանաբար, ծերանալուն զուգահեռ տառապում է սուր նարցիսիզմով: Դե, իհարկե. ի դերեւ են եղել իշխանության վերադառնալու բոլոր ջանքերը: Այժմ նրան խիստ պետք է գոնե երբեմն-երբեմն հիշեցնել իր մասին: Մեկ էլ տեսար՝ իշխանությունները խղճացին եւ թույլատրեցին, որ էքս-նախագահը հայրենիք վերադառնա: Եվ մինչ նրա «համկալ» Արազ Ալիզադեն շատ ճիշտ հասկացել է, որ բանակցությունները ներկա տրամաբանությամբ տանում են Լեռնային Ղարաբաղի անկախության միջազգայնացմանը, իսկ ՄԽ համանախագահ երկրների առաջնորդների վերջին հայտարարությունն էլ զգուշացնում է, որ «Ադրբեջանը չփորձի անգամ պատերազմի մասին մտածել», վտարանդիության մեջ զառամախտով տառապող Մութալիբովը հետեւյալ «մարգարեությունն է» արել. «Ես միշտ ասել եւ հիմա էլ ասում եմ, որ Հայաստանը պետք է անվերապահորեն վերադարձնի ադրբեջանական օկուպացված հողերը: Պաշտոնական Բաքուն մեկ անգամ չէ, որ հայտարարել է, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին լայն ինքնավարություն կտրամադրի, եւ դրանով հակամարտությունը կլուծվի»:

Եթե այսքանն ասեր խնդրին անծանոթ մեկը, ապա դա դեռ «հասկանալ կարելի էր»: Բայց երբ նման հիմարություն անում է էքս-նախագահը, ապա մնում է մտածել, որ նա ընդամենը պարզ ստախոս է եւ շողոքորթում է Իլհամ Ալիեւին: Չէ՞ որ Մութալիբովն է ստորագրել Ժելեզնովոդսկի կոմյունիկեն, որով դրվում էր Լեռնային Ղարաբաղում «իշխանության սահմանադրական մարմինների վերականգնման» առաջնահերթություն՝ որպես խնդրի հետագա կարգավորման պայման: Գնացե՞լ է իր իսկ ստորագրությամբ նախանշված ճանապարհով Մութալիբովը: Ամենեւին: Ընդհակառակը, հենց նրա բացարձակ դիտավորությամբ կամ անկարողությամբ էր, որ ԱԺՃ գրոհայինները կազմակերպեցին ուղղաթիռի կործանումը՝ չեղյալ հայտարարելով կարգավորման դեռեւս չսկսված գործընթացը: Եվ Մութալիբովն էր, որ աղետի հետքննություն անցկացնելու, իրականությունը բացահայտելու, մեղավորներին պատժելու եւ այդ կերպ դեպքերի հետագա ընթացքը կայուն վերահսկողության տակ առնելու փոխարեն կազմակերպեց զոհերի հրապարակային-ամբոխավարական թաղում եւ նույն օրն էլ հայտարարեց, որ «մենք գտնվում ենք պատերազմական իրավիճակում»:

Դրան հետեւեց Ադրբեջանի ԳԽ արտահերթ նստաշրջանի գումարումը, որտեղ «կատվից փոքրացած» Մութալիբովը պատգամավորների աչքի առաջ ստորագրեց Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը լուծարելու, այնտեղ «նախագահական ուղղակի կառավարում մտցնելու», ինչպես նաեւ պաշտպանության եւ ՆԳ նախարարությունների կողմից «Ղարաբաղի լեռնային մասի ադրբեջանական բնակչության անվտանգությունն ապահովելու» մասին օրենքն ու հրամանագրերը: Այո, պատերազմն սկսել է Այազ Մութալիբովը: Սկսել է դեռեւս այն ժամանակ, երբ օրերով քարշ էր գալիս մոսկովյան առանձնասենյակների դռներին, որպեսզի «1991 թվականն Ադրբեջանի համար դառնա Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական լուծման տարի»:

Եվ նրա պատկերացումներում ոչինչ չի փոխվել: Նա դարձյալ երազում է պատերազմի մասին: Եվ խորհուրդ է տալիս, որ «ադրբեջանական ողջ հանրությունը համախմբվի գերագույն գլխավոր հրամանատարի շուրջը, քաղաքական կուսակցությունները դադարեցնեն իրենց գործունեությունը, քանի որ որքան էլ ուժեղ եւ հայրենասեր լինի նախագահը, նա մենակ ոչինչ անել չի կարող, մյուս կողմից էլ պետք է համապատասխան դիվանագիտական աշխատանքներ տարվեն, որպեսզի պատերազմ սկսելու դեպքում միջազգային հանրությունն Ադրբեջանին մենակ չթողնի»:

Այ քեզ նախկին քաղբյուրոյականի մառազմ. միջազգային հանրությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների առաջնորդների մակարդակով զգուշացնում է, որ ուժ կիրառողը կպատժվի, սա երազում է այնպիսի «դիվանագիտական աշխատանք, որ պատերազմ սկսելու դեպքում Ադրբեջանը մենակ չմնա»: Գոնե «համկալի» ընկալունակությունն ունենար: Կամ թե հարցազրույց տալուց առաջ նրան դիմեր: Այդ դեպքում, գուցե «թանկագին Հեյդար Ալիեւիչի» օրոք տեղական արդյունաբերության նախարար աշխատած Այազ Նիյազովիչն այսքան հիմար դրության մեջ չէր ընկնի: Այնքան, որ նույնիսկ ադրբեջանական լրատվամիջոցներն են անտեսել իսլամիստների խոսափող Salam-news-ին նրա տված հարցազրույցը: Դրա փոխարեն նախկին քաղբյուրոյականի ցնդաբանությունները հաճույքով «արտատպել է» Regnum-ը: Երեւի՝ հանուն այն «ջերմ զգացմունքների», որ Մութալիբովն է տածում իրեն ապաստան տված երկրի հանդեպ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԼԻՍԱԲՈՆ

# Իշխանափոխություն Պորտուգալիայում

**Պորտուգալիայում կիրակի օրն անցկացված վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններում սոցիալիստները պարտություն են կրել, իսկ հաղթանակած Սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Պեդրու Պասուշ-Կոելյուն խոստացել է արագորեն կազմել մեծամասնության կառավարություն:**

**Պասուշ-Կոելյուն, որը փաստորեն երկրի նոր վարչապետն է, նաեւ խոստացել է կատարել Եվրոմիության եւ ԱՄՆ-ի հետ նախկին կառավարության ստորագրած վարկային համաձայնագիրը: Նրա խոսքերով, կազմվելիք մեծամասնական կառավարությունը «առաջիկա չորս տարում կապահովի երկրի կայունությունը»:**

**ԵՄ-ից եւ ԱՄՀ-ից 78 մլրդ եվրո վարկ ստանալու համար Պորտուգալիան պարտավոր է իրականացնել «ցավագին բարեփոխումներ», հիշեցնում է Ֆրանսպրեսը:**

**Հաղթող կուսակցության առաջնորդ Պասուշ-Կոելյուն իր հայտարարությունն արել է ընտրությունների պաշտոնական արդյունքների հրապարակումից անմիջապես հետո: Մեկնաբանները կառավարող Սոցիալիստական կուսակցության պարտության գլխավոր պատճառը համարում են երկրի ներկայիս ֆինանսական ճգնաժամը:**

**Ընտրություններում Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ստացել է քվեների 38,6 տոկոսը, որի շնորհիվ 230 տեղանոց խորհրդարանում կունենա առնվազն 105 տեղ (նախկին 81-ի փոխարեն):**

**Սոցիալ-դեմոկրատները կարող են խորհրդարանում հասնել բացարձակ մեծամասնության, եթե դաշն կնքեն աջակողմյան Ժողովրդական կուսակցության հետ: Վերջինս ստացել է քվեների 11,7 տոկոսը եւ կունենա 24 պատգամավոր: Կուսակցապետ Պաուլու Պորտաշը հետընտրական առաջին ելույթում չի բացառել նման դաշինքի հնարավորությունը:**



**Կառավարող աջ կենտրոնամետ Սոցիալիստական կուսակցությունը ստացել է 28,1 տոկոս եւ նոր խորհրդարանում կունենա 72 տեղ (նախկին 97-ի փոխարեն): Կուսակցապետը՝ արդեն նախկին վարչապետ Ժոզե Սոկրատեշը, հայտարարել է, որ մտադիր է կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնը թողնել մոտ օրերս կայանալիք արտակարգ համագումարում:**

**Պասուշ-Կոելյուն արդեն ցանկություն է հայտնել գործակցելու «Նոր Սոցկուսի», այսինքն՝ սոցիալիստների նոր ղեկավարության հետ՝ հանուն երկրի առջեւ ծառացած խնդիրների լուծման:**

# Եմենի ընդդիմությունը «թույլ չի տա», որ նախագահ Սալեհը վերադառնա

Եմենի ընդդիմությունը խոստացել է «թույլ չտալ» ներկայումս Սաուդյան Արաբիայում բուժվող նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի վերադարձը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Խորհրդարանական «Իսլահ» ընդդիմադիր կուսակցության առաջնորդի խոսքերով, Սալեհի հակառակորդները Եմենից նրա մեկնելը համարում են «նրա բռնակալական, կաշառասուն վարչակարգի վախճանի սկիզբը» եւ ամբողջ ուժով կփորձեն կանխել նախագահի վերադարձը: Երեկ եւ անցյալ օրը Եմենում նախագահ Սալեհի հակառակորդները բազմամարդ ցույցերով տոնել են նրա մեկնումը:



Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հիշեցնում է, որ նախագահ Սալեհը եւ մի շարք բարձրաստիճան ղեկավարներ վիրավորվել էին հունիսի 3-ին աղոթքի ժամանակ մզկիթի վրա ընկած հրետանային արկից: Հաղորդվում է, որ օդանավով Սալեհին տարել էին Սաուդյան Արաբիա: Հրետակոծության հետեւանքով նախագահը ստացել էր արտի շրջանի բեկորային վերք, ինչպես նաեւ դեմքի եւ կրծքի այրվածքներ: Կիրակի օրը Էր Ռիադում իրականացվել է Սալեհի վզի նեյրովիրահատություն: Եմենի կառավարական շրջանակներում մի անանուն աղբյուր ԶԼՄ-ներին հայտնել է, որ վերականգնողական ժամկետը կտեւի երկու շաբաթ, որից հետո նախագահը մտադիր է վերադառնալ Եմեն:

Ասոշիեյթեդ պրեսի տվյալներով, պետության ղեկավարի պարտականություններն այժմ կատարող փոխնախագահ Աբդ Ռաբ Մանսուր Խադիին հաջողվել է Հաշիդ ցեղային միության ներկայացուցիչների հետ հասնել մեկօրյա հրադադարի: Դրա շրջանակներում կողմերը մայրաքաղաք Սանայում բախումների շրջաններից հետ կկանչեն իրենց մարտիկներին:

33 տարի կառավարող Սալեհի հրաժարականի պահանջներով Եմենում հուզումներ սկսվեցին 2011-ի փետրվարին: Սալեհը մի քանի անգամ խոստացավ հեռանալ, բայց հետո դրժեց խոստումը:

Իրավիճակը սրվեց մայիսի վերջերին, երբ նախագահական զորքերը փորձեցին գրոհով վերցնել Հաշիդ ազդեցիկ ցեղային միության առաջնորդ շեյխ Սադիկ ալ Ահմարի տունը: Ի պատասխան՝ ալ Ահմարի կողմնակիցները դուրս եկան նախագահին հավատարիմ զորքերի դեմ եւ իրենց վերահսկողության տակ առան մայրաքաղաք Սանայի մի մասը:

Եմենում հակամարտության եւ բախումների ամբողջ ժամանակամիջոցում սպանվել են հարյուրավոր մարդիկ:

Պ. Ք.

# Գոլանում 20 զոհ 6-օրյա պատերազմի տարելիցի օրը

«Ազգը» հունիսի 4-ի համարում գրել էր 1967 թ. հունիսի 5-ին Սիրիայի, Հորդանանի եւ Եգիպտոսի դեմ Իսրայելի սանձազերծած 6-օրյա հաղթական պատերազմի մասին: Կիրակի օրը լրացավ այդ պատերազմն սկսվելու 44-րդ տարելիցը: Սիրիայում եւ Պաղեստինում հունիսի 5-ը նշվեց հակաիսրայելական ելույթներով: BBC-ն հաղորդում է մասնավորապես Սիրիայի պատկանած Գոլանի բարձունքների դեպքերի մասին: Այդ օրը իսրայելցի զինվորականները կրակ են բացել սիրիա-իսրայելական սահմանի արգելափակոցներին մոտեցած մարդկանց վրա: Սիրիայի պետական լրատվամիջոցների տվյալներով, Գոլանի բարձունքների վրա հունիսի 5-ին սպանվել է 20 մարդ: Իսրայելական ռադիոն իր հերթին հաղորդում է, որ բազմաթիվ մարդիկ վիրավորվել են, երբ անտառային հրդեհի հետեւանքով հակատանկային ական է պայթել:

BBC-ն նշում է, որ անկախ աղբյուրներից չի հաջողվել ճշտել զոհերի ստույգ թիվը: Ռոյթեր գործակալության թղթակիցը դեպքերի վայրից հաղորդել է, որ պատգարակներով տարել են առնվազն 11 մարդու:

Ավելի վաղ Իսրայելի բանակային աղբյուրները հայտարարել էին, որ հրեա զինվորները կրակել են առաջացող ցուցարարների ծնկներին...

# ԱՄՀ-ն 3 մլրդ դոլար կտա Եգիպտոսին

Արժույթի միջազգային հիմնադրամը համաձայնել է Եգիպտոսին 3 մլրդ դոլար վարկ հատկացնել, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Վարկի մարման ժամկետը չի նշվում:

ԱՄՀ-ն ընդգծել է, որ հավանություն է տալիս տնտեսական կայունացման նպատակով Եգիպտոսի անցումային կառավարության ձեռնարկած միջոցներին: Այսպես, վերջերս իշխանությունները հաստատեցին 2011-2012 ֆինանսական տարվա բյուջեն, որտեղ պետական ծախսերը 1/4-ով ավելացված են աղքատներին օգնելու նպատակով:

Առհասարակ մինչեւ 2012-ի կեսերը Եգիպտոսին 10-12 մլրդ դոլար է հարկավոր ապստամբության եւ իշխանափոխության հետեւանքով տուժած տնտեսությունը վերականգնելու համար: Ժողովրդական հուզումների հետեւանքով երկրի միայն զբոսաշրջության ճյուղը կորցրեց 2,3 մլրդ դոլար:

# Ծաղիկներ ու փշեր

Պատմվածքների հերոսները մեր իրականության պարզ մարդիկ են. նրանց կյանքի էպիզոդներից հեղինակը կարողանում է վերցնել ամենաբնորոշ այն գիծը, որի հիման վրա կերպարային կերտումը, ստեղծված պատկերները իրենց գեղարվեստական ձեւերի մեջ շատ բնական են, ավարտի մեկ-երկու սեղմ արտահայտությունները՝ հաճախ աֆորիստիկ ձեւակերպումով, խտացնում են այն հիմնականը, որ թաքնված է կյանքի կուլիսներում կամ նրանց գիտակցական ենթախորշերում:

**Նարինե Կոռյանի «Ճարճատուկի ծաղիկը»** ժողովածուն լույս է տեսել Վանաձորում 2011 թ.-ին: Հեղինակը անծանոթ անուն է շատերին, թեեւ գրական մամուլում տպագրվել են իր պատմվածքները, իսկ անցած տարի լույս տեսավ նրա «Հեքիաթներ փոքր մեծերի եւ մեծ փոքրերի համար» գիրքը: Հեղինակի այս վերջին ժողովածուն բաղկացած է «Ճարճատուկի ծաղիկը» եւ «Rattus sapien» պատմվածաշարերից եւ «Ժանրից դուրս» բաժնից: Առաջին երկու բաժինները իրար լրացնող եւ իրարից տարբեր՝ հեղինակի հայացքն է, վերաբերմունքը այսօրվա կյանքին, հայ մարդու առօրյային, նրա մեջ տեղի ունեցող հոգեբանական փոփոխություններին՝ մի քիչ զգացական, փոքր-ինչ՝ հեգնական, բայց եւ կարեկցող: Իր կենսափիլիսոփայությունը նա արտահայտում է գրական կերպավորման էքսիզային եղանակով: Նրա նովելները մարդկային ապրումների ու զգացումների խտացումներ են, հաճախ դրամատիկ, ողբերգական ավարտներով: Մարդկային փոխհարաբերությունների լաբիրինթոսում նա հակված է տեսնել մարդու հոգու մութ խորշերը: Հեղինակը չի դիմում կերպավորման ժամանակակից հնարքների կամ էքսցենտրիկ ձեւերի. պատկերի երեւակայական, միստիկ զարգացումների: Նա հարազատ է իր միջավայրին, իր ապրած օրերի հայկական զգացումներին, եւ պատմվածքի կերպարներն այնքան բնական են, որ թվում է այդ ամենը, ինչ կատարվում է, հազար անգամ լսել ու տեսել ես: Հեղինակը ուշադիր է ապրում, դիտում է իր շրջապատը, սովորական, պարզ մարդկանց զբաղմունքը, զննում հոգեբանությունը, որոնք աննկատ ապրում են իրենց ամենօրը եւ այդտեղից էլ վերցնում է իր նյութը: Նրանց այդ կյանքը բնազդական պայքար է եւ ոչ ավելին: Այս պայքարի մեջ կարիքն ամենածանր փորձաքարն է, որ գալիս է ցուցանելու մարդու ողորմելի գոյությունը, նրա գետնաքարշ կեցությունը: Կարիքը բռնակալի դաժանությամբ ամենուր է, եւ եթե լքում է մարդկային մի շերտ, մեկ ուրիշն է նույն պահին գտնում, ծվարում նրա մեջ ու ծվատում ներսից:

Նարինե Կոռյանի հերոսները մեզ ծանոթ մարդիկ են, ավելի շուտ նրանց նմանակները՝ գեղարվեստորեն մարմնավորված: Դեռատի կին, երկու երեխա, բանտված ամուսին, հարսի մարմնավաճառությունը կարիքից, թե՞ ի սեր նրա, գուրգուրանքով թաքցնող ծեր սկեսուրի՝ դրկիցների համար անսպասելի վարքը: «Ճարճատուկի ծաղիկը» սովի, զրկանքի մատնված ընտանիք, անկրակ տուն ու անճարակ տղամարդու հոգեվիճակների երկվություն՝ ծառը կտրել-չկտրելու («Ծառը»), նույն երկվությունը՝ տառապանքի ապրում է մեկ այլ հերոս, երբ կնոջ վիրահատության համար ստիպված է լինում միակ կովը որպես մսացու շուկա հանել: Մորթված ծառի ու կովի աչքերում նրանք երկուսն էլ իրենց մորթված կյանքն են տեսնում. սա նաեւ բնության հետ մարդու՝ դեռեւս անաղարտ մնացած կապի վերջին ակորդներն են թերեւս: Հեղինակը փորձում է ստեղծել միջավայրին օտարացած կերպարներ՝ աղավաղվող հոգեբանությունների եւ բարքերի մերօրյա ֆոնին:



Ժամանակը, թվում է, կանգ է առել այս կողմերում, ապրում են մարդիկ, անցնում անհետք, անհետեւանք՝ մահն այնքան հեշտ է, ու մարդն անհասցե: Նարդոսյան մեր թաղի շունչն է բուրում այստեղից, թումանյանական մթնոլորտը, գիքորների, լոռեցի սաքոների արձագանքները դեռ լսվում են այս ձորերում: Իրենց գոյության փոքր պատյաններից դուրս չեկող մարդիկ կյանքի գույներին ավելացնում են իրենցը՝ գորշ-մոխրագույնը, իրենց հոգու գույնը:

Կիսաքաղց կյանքը շարունակվում է արնոտվել սուր եռաժանու դեղին ժպիտից. նրանց աչքերում սառած, քարացած է մնում ապրելու վախը, շարժվում են միայն բնազդի օրենքով: Կյանքից հալածված մարդկային էակներ՝ երբեմն խղճալի ու երբեմն ճղճիմ, որոնք գլաքարերի հնազանդությամբ տրվում են կյանքի պղտոր հեղեղին եւ չեն էլ կարող որեւէ բան անել դա փոխելու, որովհետեւ բնազդի գերին են, գիտակից շերտին անհաղորդ:

Հեղինակը ուշի-ուշով հետեւում է այս մարդկանց ճակատագրին, որոնք կյանքի հատակը նետվում են ոչ միայն թուլությունից կամ կարիքից եւ կամ իրականության պարտադրանքից, այլեւ սեփական կամքի ու գիտակցության պակասից: Դեպքերն ու եղելությունները կատարվում են գրողի հարազատ բնակավայրում, Հայաստանի հյուսիսային շրջանում, մեր կյանքի դժվարին՝ հետերկրաշարժի ժամանակահատվածում, երբ տնտեսական աղետն ու փլուզումները, պատերազմն ու թալանը մարդկանց դարձրին անտունի, անաշխատանք, թշվառ ու անապրուս, երբ կյանքը փոխեց իր գինը, իր մաշկի գույնը:

Խուլ է աշխարհի այս անկյունում ծվարած մարդկանց գոյապայքարը եւ նույն խեղճությամբ. դարեր են անցել, ժամանակի վրա ասես ժանգ է նստել, ոչինչ չի փոխվել. մարդկային հարաբերությունների այս տեւական ընթացքի մեջ զարգացումներ չկան, հասունացում չկա մտքի. նույն մարդկային նեղ եսասիրական շահեր, գծուծ, մանր կրքեր՝ դրամասիրության, խղճի պարապություն: Ահա մի պատկեր, որ կարելի է տարբեր շրջանի գրական գործերում տեսնել. ծեր կնոջ (մոր) կյանքի ավարտը սառը գիշերվա անհայտության մեջ՝ սեփական աղջկանից լքված, արհամարհված («Կյանքի գինը»):

Գրքի հաջորդ բաժնի պատմվածքները տրամադրությունների կտրուկ փոփոխություն թեեւ չեն արձանագրում, նույն միջավայրն է հոգեբանական առումով, եւ հարաբերություններն էլ դարձյալ անձնական-կենցաղային-կյանքային, սակայն ակնհայտ տարբերություն կա նախորդներից: Պատմվածքներ նոր հերոսներ են մուտք գործում, ավելի ժամանակակից, ավելի մտածող, որոնք կարիքից, առօրեականությունից վեր բարձրանալ են փորձում, գիտակցում ձանձրույթի վտանգը, այսինքն՝ կյանքի մեկ այլ աստիճան են որոնում, փորձում բախել այլ իրականության դռներ, բայց հայտնվում են օտար, անհասկանալի միջավայրում, որտեղ ապրում են քաղաքակրթության բավիղների անսպասելի սարսափն ու սոսկումը («No exit»):

Ավերակներին հայտնված մտածողը անդունդի պռունկները մաշում է համաշխարհային դասականների քերթվածքներով, Համլետ ու Պաստեռնակ է կարդում, Ռախմանինով նվագում՝ քնիչի հատուկ թույլտվությամբ իրենից գողացված ռոյալի վրա, այդ խենթ հոգին իրականության ու երազի միջեւ բացվող խորությունը չափում է ռոյալի ստեղնաշարի ողբերգական նոտահարումով («Հավերժության գերիները»):

Հեղինակին հաջողվել է ստեղծել կենդանի պատկերներ, հոգեբանական համոզիչ կերպարներ՝ օգտագործելով նաեւ տեղական բարբառային լեզվին հարազատ տարրեր: Լեզվամտածողությունը սեղմ է եւ հակիրճ՝ հեգնանքի, երբեմն սարկազմի նկատելի հնչերանգով («Օգնությունը», «Երկրաշարժ էր»): Գործողություններին բնորոշ է շատ անսպասելի ավարտ, անակնկալներ, երբեմն նաեւ չհիմնավորված. «Ողորկ սալաքարերի թագավորը (Infinity)»: Այս ամենը նման է պաստառին թողած կետագիծ հետքերի:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Երեւանում մեկնարկեց Արամ Խաչատրյանի անվան մրցույթը



**Երեկ՝ հունիսի 6-ին, 7-րդ անգամ մեկնարկեց «Արամ Խաչատրյան» միջազգային մրցույթը: Երեկոյան Արամ Խաչատրյան համերգասրահում պաշտոնապես ազդարարվեց մրցույթի մեկնարկը, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան) եւ մի շարք միջազգային ամենահեղինակավոր մրցույթների դափնեկիր, դաշնակահար Արմեն Բաբախանյանի կատարումով՝ հնչեց Արամ Խաչատրյանի դաշնամուրային կոնցերտը:**

**Ինչպես լրագրողներին տեղեկացրեց ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Սմբատյանը, 7-րդ միջազգային մրցույթին, որն անցկացվում է դաշնամուր եւ կոմպոզիցիա (առաջին անգամ) անվանակարգերում, մասնակցելու են 47 երաժիշտ՝ 36 դաշնակահար (16-32 տարեկան) եւ 11 կոմպոզիտոր (առանց տարիքային սահմանափակման), ԱՊՀ-ից, Եվրոպայից, ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրալիայից, Լիբանանից, Իտալիայից, Վրաստանից, Չինաստանից, Կորեայից եւ Դոմինիկյան հանրապետություններից:**

**Դաշնակահարների մրցույթն անցկացվելու է երեք փուլով եւ ժյուրիի նախագահ է ընտրվել ՀՀ ժող. արտիստ, պրոֆեսոր Սվետլանա Նավասարդյանը: Առաջին մրցանակակիրին կհանձնվի դափնեկրի դիպլոմ եւ 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, երկրորդին՝ 10.000, իսկ երրորդին՝ 5.000: Եզրափակիչ փուլի մասնակիցներն, ովքեր չեն դառնա մրցանակակիր, կպարգեւատրվեն մասնակցության դիպլոմով եւ 2000-ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամով:**

**Միջազգային մրցույթի կազմկոմիտեն կոմպոզիցիա մասնագիտության համար սահմանել է մեկ մրցանակ՝ 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ եւ դափնեկրի դիպլոմ:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Գլենդելում ցուցադրվեցին Տիգրան Խզմալյանի ֆիլմերը

*«Մեր հակասությունը իշխանությունների հետ գեղագիտական է», ասում է նա*

**Washington Policy Forum-Armenia կազմակերպության հրավերով ԱՄՆ ժամանած կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանը Գլենդելի Հանրային գրադարանում ցուցադրեց իր 3 փաստավավերագրական ֆիլմերը՝ «Երեւանի գլխավոր գաղտնիքը», «Քրիստոսի կենդանագիր պատկերը», «Դեպի Արարատ»: «Երեւանի գլխավոր գաղտնիքը»՝ Ալեքսանդր Թամանյանի եւ նրա մեծ սիրո մասին պատմող ֆիլմը 2009 թվականին Ռուսաստանի ճարտարապետների միության կողմից համարվեց ճարտարապետության մասին լավագույն ֆիլմ: Իսկ Գարեգին Չուգասզյանի համահեղինակությամբ ստեղծված «Արամ Խաչատրյանի դարը» կինոնկարը ճանաչվեց իբրեւ լավագույն մուլտիմեդիա-նախագիծ մշակույթի ասպարեզում՝ ողջ աշխարհում: «Իմ նպատակն ապացուցելն է, որ ցածրորակ սերիալներից բացի, որոնք արտահանվում են նաեւ ԱՄՆ, Հայաստանում կա նաեւ մշակույթ, կա մարդկանց մի ստվար զանգված, որ ոչ կոմերցիոն նպատակով է զբաղվում այդ գործով»:**

**Տիգրան Խզմալյանը «Սարդարապատ» ընդդիմադիր շարժման նախաձեռնող խմբի անդամ է. «Մեր տարաձայնությունները իշխանությունների հետ գեղագիտական են, այն, ինչ արվում է մեր մշակույթի հետ, աններելի է: Եվ մենք, մեր տեսակը պայքարի է մտել իշխանությունների հետ, որովհետեւ մեզնից խլում են մեր մշակույթը, մեր պատմությունն ու արժանապատվությունը: Մենք դիմադրում ենք այն ամենին, ինչ կատարվում է»:**

**Նա իր փաստավավերագրական ֆիլմերը ներկայացնում է «Հայաստանը 20-րդ դարում» շարքով: Մենք պետք է հասկանանք մեր սխալները, որպեսզի չկրկնենք նույն սխալները 21-րդ դարում», ասում է կինոռեժիսորը:**

Դ. Դ.

ԳՅՈՒՄՐԻ

# «Իմ աշխարհը» բացօթյա ցուցահանդես-համերգ՝ նվիրված երեխաների օրվան

**«Մարդու իրավունքների եւ կոնֆլիկտների ուսումնասիրության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը մի փոքր ուշացումով, բայց գեղեցիկ միջոցառմամբ նշեց Երեխաների պաշտպանության միջազգային օրը: «Իմ աշխարհը» խորագրով Գյումրու Թատերական հրապարակում կազմակերպված բացօթյա ցուցահանդես-համերգին ներկայացվել էին քաղաքում գործող մանկատների 5-ից 16 տարեկան սաների հինգ տասնյակից ավելի նկարչական աշխատանքներ:**

**Նշված կազմակերպության նախագահ Արմեն Մելքոնյանի եւ ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության ներկայացուցիչ Մարինա Դոցենկոյի բացման խոսքից հետո մանուկների տնն իրենց ելույթներով շնորհավորեցին Շիրակի մարզկենտրոնի Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի «Վարդեւանյան պարի թատրոնի», «Բյուրեղ» եւ «Արտ» պարային համույթների սաները, որոնք հանդես եկան ինչպես ժողովրդական, այնպես նաեւ «լաշինո» ոճի պարերի կատարումներով: Երգերի կատարումներով ելույթ ունեցան մանկատների սաները: Դրան հաջորդեց նկարների դիտումը, պատվոգրեր հանձնվեցին նկարների հեղինակներին եւ պարային կոլեկտիվներին:**

**Մանուկներին միալար առօրյայից գեթ փոքր-ինչ կտրելու եւ հասարակության տարբեր շերտերի ուշադրությունը նրանց հիմնախնդիրների վրա հրավիրելու կոչված այս միջոցառումը, կազմակերպիչների գնահատմամբ, փոքրիկների օրը դարձրեց ուրախ ու հետաքրքիր՝ գրավելով թե երեխաների եւ թե մեծերի ուշադրությունը:**

Գ. Մ.

# Թբիլիսիի Ադամյանցիները Հայաստանում

**Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը այս տարի նշում է 155-ամյակը: Հարուստ ավանդույթներ ու պատմություն ունեցող թատրոնում ընթանում են վերանորոգման լայնածավալ աշխատանքներ՝ Վրաստանի կառավարության 1,2 միլիոն դոլար հատկացված գումարներով: Մինչ կավարտվեն վերանորոգման աշխատանքները, թատրոնն իր ստեղծագործական գործունեությունը ծրագրել է իրականացնել հյուրախաղերի ձեւաչափով: 16 անձից բաղկացած թատերախումբը հունիսի 6-19-ը կհյուրընկալվի Հայաստանի քաղաքներում: Թատերասերների դատին կհանձնվի՝ Վանաձորում՝ հունիսի 7-8-ին, իսկ Երեւանում՝ 9-ին, Ջ. Պատրիկի «Սիրելի Պամելա» բեմադրությունը: Իսկ Ս. Բելովի «Շտապ պահանջվում է 5000 եվրո» բեմադրությունը կցուցադրվի Ստեփանավանում, Ալավերդիում: Թատերասերները Գ. Խանջյանի «Ավերակների պահակները» ներկայացումը հնարավորություն կունենան ըմբոշխնել հունիսի 17-ին Ալավերդիում, 18-ին՝ Վանաձորում: 14 օրերի ընթացքում ադամյանցիները կներկայացնեն 10 ներկայացում:**

Ս. Մ.

# Սարյանի կտավը աճուրդի կդրվի Լոնդոնում

Հունիսի 7-ին Լոնդոնում ռուսական արվեստի գործերի աճուրդի շրջանակում աճուրդի է դրվելու նաեւ Մարտիրոս Սարյանի «Կովկասյան քաղաքի փողոց» կտավը: Աճուրդին ներկա է լինելու նաեւ Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզան Սարյանը: Իմանալով աճուրդի մասին, նա հանդես էր եկել հայտարարությամբ, հույս հայտնելով, որ մեծահարուստ հայերից մեկը կգնի եւ թանգարանին կնվիրի կտավը: Սարյանի կտավը գնահատվել է 200-300 հազար եվրո:

ԱԶԳ

# Մարզական

## Պաշտպանները ձախողեցին հավաքականի խաղը

### ՀՀ հավաքականը զրկվեց ուղեգրի համար պայքարելու հնարավորությունից

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը Սանկտ Պետերբուրգում 1-3 հաշվով պարտվելով Ռուսաստանի ընտրանուն, վերջնականապես զրկվեց Եվրոպայի առաջնության եզրափակիչի ուղեգրերի համար պայքարելու հնարավորությունից: Թեեւ եթե դատենք հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի բազմիցս արված մեկնաբանություններից, ընտրական այս մրցափուլում մեր ընտրանու առջեւ ուղեգիր նվաճելու խնդիր դրված չէ:

Սպասվում էր, որ Ռուսաստանի հավաքականն առաջին իսկ րոպեներից դիմելու է վճռորոշ գրոհների, փորձելու է շատ շուտ հասնել արդյունքի: Իսկ որ մեր ֆուտբոլիստները խաղի մեկնարկում խուճապի էին մատնվելու, հաճախակի սխալվելու էին պարզ իրադրություններում, անկեղծ ասած, անսպասելի էր: Լավ էր, որ այդ րոպեներին մարզական բախտը ժպտաց մեր հավաքականին ու մերոնք գոլ բաց չթողեցին: Աստիճանաբար ուշքի գալով, մեր ֆուտբոլիստները քիչ թե շատ կարգավորեցին խաղն ու Մովսիսյան-Մարկոս կոմբինացիայից հետո 25-րդ րոպեին բացեցին հաշիվը: Սակայն դեռեւս չէինք հասցրել վայելել խփած գոլի բերկրանքը, երբ Ռոման Պավլյուչենկոն վերականգնեց հավասարակշռությունը: Իսկ ընդմիջումից հետո Պավլյուչենկոն եւս 2 գոլ խփեց՝ դառնալով հանդիպման հերոսը:

Ի՞նչ կարելի է ասել Հայաստանի հավաքականի ցուցադրած խաղի մասին: Եթե առջեւի գծում մեր ֆուտբոլիստներին հաջողվեց որոշ դրվագներում կոմբինացիոն գործողությունների արդյունքում սպառնալ մրցակցի դարպասին, ապա մեր հավաքականի պաշտպանները պարզապես ձախողվեցին: Երկու անգամ Պավլյուչենկոն փաստորեն անարգել կարողացավ գրավել Բերեզովսկու պաշտպանած դարպասը՝ օգտվելով մեր պաշտպանների դիրքային սխալից:

Հատկապես թույլ էր պաշտպանության ձախ թեւը, որտեղ խաղում էր Լեւոն Հայրապետյանը: Վերջինիս ստիպված էր օգնության հասնել Գեւորգ Ղազարյանը, որն այս խաղում մեծ ծավալի օգտակար աշխատանք կատարեց: Սակայն հիմնականում զբաղված լինելով պաշտպանական գործողություններով, Ղազարյանը չէր կարողանում մասնակցել թիմի գրոհներին, ինչից առջեւի գծի խաղը տուժում էր:

Իրեն չարդարացրեց չգիտես ինչու «անակնկալ» որակված Լեւոն Փաչաջյանի ընդգրկումը մեկնարկային կազմում: Վերջինս ոչնչով աչքի չընկավ, բացի դեղին քարտ ստանալուց: Նրան փոխարինած Էդգար Մանուչարյանը բավականին լավ մտավ խաղի մեջ, որոշ սրություն մտցրեց հավաքականի հարձակողական գործողություններում:

Ինչպես երեւանյան խաղում, այնպես էլ Սանկտ Պետերբուրգում իր հնարավորություններից ցածր հանդես եկավ Հենրիխ Մխիթարյանը, որը որոշ դրվագներում նույնիսկ չարաշահում էր անհատական խաղը: Թերեւս կարելի է գովեստի խոսքեր հղել Յուրա Մովսիսյանի եւ Մարկոսի հասցեին, որոնք վատ չէին համագործակցում: Հենց այդ համագործակցության արդյունքում էլ «ծնվեց» մեր հավաքականի միակ գոլը:

Ընդհանուր առմամբ մեր հավաքականի խաղն առանձնապես տպավորություն չթողեց: Թեեւ անկեղծորեն պետք է խոստովանենք, որ ռուսներն էլ իրենց բնորոշ խաղը չցուցադրեցին: Եվ եթե չլիներ մեր պաշտպանների անփույթ խաղը, գուցե հաջողվեր դրական արդյունքի հասնել:

Ընտրական հաջորդ հանդիպումը ՀՀ հավաքականն անցկացնելու է սեպտեմբերի 2-ին՝ հյուրընկալվելով Անդորրայի հավաքականին: Ընտրական մրցաշարում ստեղծված իրադրությունում մեր հավաքականը լավագույնը խմբում կարող է հավակնել 4-րդ տեղին: Այս պարագայում մեր գլխավոր մրցակիցը Մակեդոնիայի ընտրանին է, որի հետ երեւանյան մրցախաղն էլ վճռորոշ կլինի 4-րդ տեղի համար պայքարում:

**Մրցաշարային աղյուսակ**

**B խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իռլանդիա | 6 | 4 | 1 | 1 | 11-6 | 13 |
| 2. Ռուսաստան | 6 | 4 | 1 | 1 | 9-4 | 13 |
| 3. Սլովակիա | 6 | 4 | 1 | 1 | 6-4 | 13 |
| 4. Հայաստան | 6 | 2 | 2 | 2 | 10-7 | 8 |
| 5. Մակեդոնիա | 6 | 1 | 1 | 4 | 5-8 | 4 |
| 6. Անդորրա | 6 | 0 | 0 | 6 | 1-13 | 0 |

## Վարդան Մինասյան. «Առաջինը մենք սխալվեցինք ու պարտվեցինք»

**Նախ շնորհավորում եմ Ռուսաստանի հավաքականին հաղթանակի առթիվ: 1-1 հաշվի ժամանակ հավասար խաղ էր ընթանում: Նման դեպքերում ով առաջինն է սխալվում, պարտվում է: Ցավոք, սխալվեցինք մենք: Երկու անգամ մեր պաշտպանները դիրքային սխալ թույլ տվեցին ու Պավլյուչենկոն գրավեց Բերեզովսկու պաշտպանած դարպասը: Դրանք էլ վճռեցին հանդիպման ելքը: Մեր ֆուտբոլիստները երիտասարդ են, փորձառության պակաս ունեն, ինչն էլ զգալ տվեց այսօրվա խաղում: Մենք կվերլուծենք այսօրվա խաղում թույլ տված սխալները, համապատասխան եզրահանգումներ կանենք ու կնախապատրաստվենք հաջորդ հանդիպմանը: Այս խաղում մեր նպատակը ոչ միայն Անդրեյ Արշավինին, այլ Ռուսաստանի հավաքականի բոլոր ֆուտբոլիստներին վնասազերծելն էր, ինչը չստացվեց: Երեւանում մենք այնքան էլ լավ չխաղացինք, սակայն հանդիպումն ավարտեցինք ոչ-ոքի: Այստեղ ավելի լավ խաղացինք, բայց պարտվեցինք:**

## Դիկ Ադվոկաս. «Որակական առումով մեր ամենադժգույն խաղն էր»

**Որակական առումով ընտրական մրցաշարում սա մեր վատագույն խաղն էր, թեեւ հաղթեցինք եւ գոհ ենք արդյունքից: Երեւանում մենք ավելի լավ խաղացինք, զգալի առավելություն ունեինք, վերահսկում էինք գնդակը, գոլային 5-6 պահեր ստեղծեցինք, սակայն չկարողացանք հաղթել: Այսօրվա խաղում ֆուտբոլիստների գործողություններում նյարդայնություն էր զգացվում, շատ էր անիմաստ վազվզոցը: Մեր ոչ բոլոր ֆուտբոլիստներն էին լավ մարզավիճակում: Խաղի նախօրեին կայացած մամուլի ասուլիսում նշել էի, որ գոհ եմ ընտրական նախորդ հանդիպումներում հավաքականի ցուցադրած խաղից: Երբ մեզ քննադատում էին ընկերական հանդիպումներում ցուցադրած խաղի համար, համաձայնվում էի, իսկ ահա ընտրական խաղերի վերաբերյալ քննադատությունը չէի ընդունում: Իսկ ահա այսօրվա խաղով մենք իրոք քննադատվելու եւ դժգոհ մնալու առիթ տվեցինք: Այդ մասին խաղից հետո ասել եմ նաեւ ֆուտբոլիստներին:**

ՇԱԽՄԱՏ

## Տիգրան Պետրոսյանը երկրորդն է



**Հնդկաստանում ավարտված շախմատի մրցաշարում Հայաստանը ներկայացրած Տիգրան Պետրոսյանը 11 հնարավորից վաստակած 8,5 միավորով գրավեց 2-րդ տեղը: Մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր վարկանիշն ունեցող Պետրոսյանն ավարտական 4 տուրերում 3 միավոր վաստակեց: Նա 8-րդ տուրում հաշտություն կնքեց Լաքսմանի հետ, ապա հաջորդաբար հաղթեց Էնամուլ Հուսեյնին եւ Սերգեյ Կասպարովին:**

**Ավարտական տուրից առաջ 8,5 միավորով առաջատարը Մագեշ Պանչանաթանն էր, որին հետապնդում էին 8-ական միավոր ունեցող Տիգրան Պետրոսյանը, Աբհիջեթ Գուպտան եւ Ալեքսեյ Ալեքսանդրովը: 11-րդ տուրում Պետրոսյանը սեւերով հաշտություն կնքեց Գուպտայի հետ, իսկ ահա բելառուս գրոսմայստեր Ալեքսեյ Ալեքսանդրովը հաղթելով Պանչանաթանին, 9 միավորով դարձավ մրցաշարի հաղթող: Վերջինս վաստակած 8,5 միավորով լրացուցիչ գործակիցներով զիջեց Պետրոսյանին եւ գրավեց 3-րդ տեղը: Բելառուսը ներկայացնող Սերգեյ Կասպարովը 8 միավորով զբաղեցրեց 7-րդ տեղը:**

## Ռաֆայել Նադալը «Ռոլան Գարոսի» վեցակի չեմպիոն



**Ինչպես եւ սպասվում էր, թենիսի Ֆրանսիայի բաց առաջնության տղամարդկանց մենախաղի եզրափակիչում գլխավոր մրցանակը վիճարկեցին իսպանացի Ռաֆայել Նադալն ու շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը: Հաջողությունն ուղեկցեց Ռաֆայել Նադալին (7-5, 7-6, 5-7, 6-1), որն իր հավասարը չունի հողածածկույթով կորտերում: Իսպանացի թենիսիստը 6-րդ անգամ դարձավ «Ռոլան Գարոսի» հաղթող ու այս ցուցանիշով հավասարվեց Բյոռն Բորգին:**

**Հետաքրքրական է, որ «Ռոլան Գարոսում» անցկացրած 7 մրցաշարերում Նադալը միայն մեկ պարտություն է կրել՝ 2009-ին 4-րդ շրջանում զիջելով շվեդ Ռոբին Սոդերլինգին: Նադալի այդ «սայթաքումից» օգտվել էր Ֆեդերերը, որին վերջապես հաջողվել էր արժանանալ «Ռոլան Գարոսի» մրցաշարի գլխավոր մրցանակին:**

**Կանանց մենախաղում դրամատիկ պայքարում չինացի թենիսիստուհի Նա Լին 6-4, 7-6 հաշվով պարտության մատնեց իտալուհի Ֆրանչեսկա Սկյավոնեին: Մարզական կարիերայում Նա Լին առաջին անգամ հաղթող ճանաչվեց «Մեծ սաղավարտի» մրցաշարում: Նա նաեւ դարձավ «Մեծ սաղավարտի» մրցաշարերում գլխավոր մրցանակին արժանացած ասիացի առաջին թենիսիստուհին:**

**Տղամարդկանց զուգախաղում հաղթող ճանաչվեց Մաքսիմ Միրնի-Դանիել Նեստոր զույգը, որը եզրափակիչում պարտության մատնեց Խուան Սեբաստիան Կաբալ-Էդուարդո Շվանկ երկյակին (7-6, 3-6, 6-4): Կանանց զուգախաղում հաջողության հասան չեխ թենիսիստուհիներ Անդրեա Գլավաչկովան եւ Լյուսի Գրադեցկան, որոնք 6-4, 6-3 հաշվով հաղթեցին Ելենա Վեսնինա-Սանյա Միրզա զույգին: Խառը զուգախաղում գլխավոր մրցանակը շահեց Կեյսի Դելակուա-Սկոտ Լիպսկի զույգը, որը պարտության մատնեց Կատարինա Սրեբոտնիկ-Նենադ Զիմոնիչ երկյակին (7-6, 4-6, 10-7):**

## Առաջատարներն ամրապնդում են դիրքերը

Մեկնարկեց ֆուտբոլի Եվրոպայի 2012-ի առաջնության ընտրական մրցաշարի 2-րդ շրջանը: B խմբում, որտեղ հանդես են գալիս Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստները, ի հայտ եկան բացահայտ առաջատարները, որոնք էլ կվիճարկեն հաջորդ փուլի 2 ուղեգրերը: Բացի ռուսներից, 6-րդ տուրում հաղթանակներ տոնեցին նաեւ Սլովակիայի եւ Իռլանդիայի հավաքականները: Եթե սլովակները սեփական հարկի տակ դժվարությամբ հաղթեցին Անդորրայի ընտրանուն Կարխանի խփած միակ գոլի շնորհիվ, ապա իռլանդացիները հյուրընկալվելիս վստահ հանդես եկան: Մակեդոնիայի հավաքականի հետ խաղում աչքի ընկավ իռլանդացիների ավագ Ռոբի Քինը՝ 2 անգամ գրավելով մրցակցի դարպասը: Նա ազգային հավաքականում գոլերի թիվը հասցրեց 51-ի: Քինը դարձավ բրիտանացի ֆուտբոլիստներից ամենաարդյունավետն ազգային հավաքականներում խփած գոլերով: Նա գերազանցեց լեգենդար Բոբի Չարլտոնի ռեկորդը, որն Անգլիայի հավաքականում խփել է 49 գնդակ:

Ընտրական B խմբում այժմ Ռուսաստանի, Իռլանդիայի եւ Սլովակիայի հավաքականները պետք է որոշեն երրորդ ավելորդին:

A խմբում առաջատարի դիրքերն ավելի ամրապնդեց Գերմանիայի հավաքականը՝ հյուրընկալվելիս 2-1 հաշվով պարտության մատնելով ավստրիացիներին: Գերմանացիների հաղթանակն ապահովեցին Մարիո Գոմեսի խփած 2 գոլերը: Գերմանիայի հավաքականը 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց ու վստահորեն 18 միավորով գլխավորում է աղյուսակը: Առաջատարին հետապնդող Բելգիայի եւ Թուրքիայի հավաքականների մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Բելգիայի հավաքականը 7 խաղից հետո ունի 11 միավոր: Առաջին հաղթանակը տոնեց Ղազախստանի ընտրանին՝ սեփական հարկի տակ 2-1 հաշվով պարտության մատնելով Ադրբեջանի հավաքականին:

C խմբի առաջատար իտալացիներն էլ ամրապնդեցին դիրքերը՝ սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթելով էստոնացիներին: Իտալացիները 6 խաղում 16 միավոր են վաստակել: 11 միավորով 2-րդ տեղում ընթացող Սլովենիայի ընտրանին հյուրընկալվելիս հաղթեց Ֆարերներին (2-0):

D խմբում կենտրոնականը Բելառուսի եւ Ֆրանսիայի հավաքականների մրցավեճն էր: Ֆրանսիացիները մինչ այդ 4 անընդմեջ հաղթանակ էին տոնել: Սակայն Մինսկում նրանց հաղթարշավն ընդհատվեց: Գրանցվեց ոչ-ոքի (1-1): Հիշեցնենք, որ Փարիզում բելառուսները հաղթել էին մրցակցին: Մյուս խաղում ռումինացիները 3-0 հաշվով հաղթեցին բոսնիացիներին: Ֆրանսիան 13 միավորով պահպանեց առաջատարի դիրքը: 2-րդ տեղում ընթացող բելառուսներն ունեն 9 միավոր:

E խմբում շվեդները հյուրընկալվելիս 4-1 հաշվով հաղթելով Մոլդովայի հավաքականին, վաստակեցին 12 միավոր: Ֆիններն էլ արտագնա խաղում խփած միակ գոլի շնորհիվ պարտության մատնեցին Սան Մարինոյի հավաքականին: 18 միավորով E խմբի առաջատարները հոլանդացիներն են:

F խմբի երեք առաջատարներն էլ հաղթեցին: Հույները սեփական հարկի տակ 3-1 հաշվով առավելության հասան Մալթայի ընտրանու նկատմամբ: Խորվաթները հաղթեցին վրացիներին (2-1), իսկ Իսրայելի հավաքականը մրցակցի դաշտում պարտության մատնեց լատվիացիներին: Հույները 14 միավորով գլխավորում են աղյուսակը, խորվաթներն ու իսրայելցիները մեկ միավոր պակաս են վաստակել:

G խմբի երկու հանդիպումներում էլ գրանցվեց ոչ-ոքի. Անգլիա-Շվեյցարիա՝ 2-2, Չեռնոգորիա-Բուլղարիա՝ 1-1: Անգլիայի եւ Չեռնոգորիայի հավաքականները 11-ական միավորով գլխավորում են աղյուսակը:

H խմբում ուշադրության կենտրոնում էր Պորտուգալիա-Նորվեգիա հանդիպումը: Պոստիգայի խփած միակ գոլի շնորհիվ պորտուգալացիները հաղթեցին ու շրջանցելով նորվեգացիներին, 10 միավորով գլխավորեցին աղյուսակը: Նույնքան միավոր ունեն նաեւ Դանիայի եւ Նորվեգիայի հավաքականները: Դանիացիները հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեցին իսլանդացիներին:

I խմբում կայացած միակ խաղում գրանցվեց 6-րդ տուրի ամենախոշոր անակնկալը: Լիխտենշտեյնի հավաքականը սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց Լիտվայի ընտրանուն, որի հետ օգոստոսի 10-ին ընկերական մրցախաղում Կաունասում մրցելու է Հայաստանի հավաքականը: Լիխտենշտեյնն ընտրական մրցաշարում անդրանիկ հաղթանակը տոնեց, իսկ խմբի առաջատարն աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի ընտրանին է, որը հաղթել է անցկացրած բոլոր 5 խաղերում էլ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Կաթվածահար երթեւեկություն եւ «մինի լճակներ» մայրաքաղաքի փողոցներում



Վերջին երկու օրվա ընթացքում մայրաքաղաքում դժվար գտնվի մեկը, որ քայլել է Երեւանի փողոցներով, երթեւեկել սեփական մեքենայով կամ հասարակական տրանսպորտով ու գոնե մտքում հայհոյել: Հայհոյելու իրավունք երեւանցիներն իսկապես ունեին: Կիրակի երեկոյան տեղացած ուժեղ անձրեւից հետո Երեւանի բազմաթիվ փողոցներով անհնար էր երթեւեկել: Մասնավորապես կաթվածահար վիճակում էին հայտնվել Կոմիտասի եւ Ազատության փողոցները: Մինի լճակներ էին կուտակվել նաեւ Մալաթիա-Սեբաստիայում: Երթեւեկությունը երկար ժամանակով կանգնել է Հալաբյան, Շինարարների, Լենինգրադյան, Ռուբինյանց փողոցներում:

Երեկ առավոտյան տեղացած կարճատեւ անձրեւը կրկին ստիպեց, որ փողոց անցնելու համար երեւանցիներն ահագին ճանապարհ կտրեն, հարմար տեղ գտնեն, որ մինչեւ ծնկները չթրջվեն:

Խնդիրը կարծես թե հավիտենական է դառնում Երեւանի համար: Յուրաքանչյուր հորդառատ անձրեւից հետո գրեթե անհնար է դառնում Հանրապետության փողոցով անցնելը: Սարսափելի կուտակումներ են գրանցվում նաեւ Խանջյան, Մաշտոցի փողոցներում: Եթե կիրակնօրյա ուժգին անձրեւը տեւեր ոչ թե 25 րոպե, այլ, օրինակ, մեկ ժամ կամ ավելի, ապա անձրեւաջուրը լցվելու էր բազմաբնակարան շենքերի ոչ միայն նկուղային հարկերը, այլեւ շքամուտքերը:

Խնդրի մասին առաջին անգամ չի գրվում, ու քաղաքապետարանում առաջին անգամ չէ, որ լսում են: Սակայն փոփոխություն առայժմ չի նկատվում:

Հարց է առաջանում, ե՞րբ է քաղաքապետարանն ուշադրություն դարձնելու, որ մայրաքաղաքի փողոցների ջրահեռացման համակարգերը նորմալ աշխատեն: Ե՞րբ են հետամուտ լինելու, որ դրանք նախ մաքրվեն տարիներով կուտակված կեղտից եւ այլընտրանքային աղբաման աշխատելու փոխարեն աշխատեն որպես ջրահեռացման համակարգ:

Հ. Հ.

**Հ. Գ. Երեկ հերթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ քաղաքապետի ուշադրության կենտրոնում ոչ թե ջրահեռացման համակարգերի խնդիրն էր, այլ, ի թիվս մի շարք հարցերի՝ նաեւ ծխող վարորդների խնդիրը: Պարզվեց, որ համաձայն վերջին մոնիտորինգի՝ մայրաքաղաքի հասարակական տրանսպորտում զգալիորեն կրճատվել է ծխող վարորդների թիվը:**

# ԱՄՀ նախկին ղեկավարն անմե՞ղ է

Նյու Յորքի գերագույն դատարանում երեկ սկսվեց Արժույթի միջազգային հիմնադրամի նախկին պետ Դոմինիկ Ստրոս Կանի դատավարությունը, որն ամբաստանվում է տեղի «Սոֆիտել» հյուրանոցում մայիսի 14-ին ծագումով գվինեացի աղախնի նկատմամբ սեռական ոտնձգություն կատարելու եւ բռնաբարության փորձի մեջ: Առաջին նիստում Ստրոս Կանի փաստաբանը հայտարարեց, որ իր պաշտպանյալի արարքում երկու կողմերի միջեւ «պարտադրանքի որեւէ տարր» չկա եւ նա անմեղ է, մինչ հայցվորի փաստաբանը դատարանի նախասրահում հայտնեց, թե իր պաշտպանյալը «պարզապես արդարություն է պահանջում», հասկացնելով, որ աղախինը նյութական պահանջներ չի առաջադրում:

Այդպիսով, սկսվեց մի դատավարություն, որն, ըստ ամենայնի, խոստանում է երկար տեւել: Մեղքը հաստատվելու պարագայում Ստրոս Կանին սպասում է 25 տարվա բանտարկություն: Իսկ անմեղ հռչակվելու դեպքո՞ւմ: ԱՄՀ նախկին պետն արդեն կորցրել է իր պաշտոնը, տարեկան 400.000-եվրոյանոց աշխատավարձը, Ֆրանսիայի առաջիկա նախագահական ընտրություններում սոցիալիստական ճամբարի գլխավոր թեկնածու լինելու հեռանկարը, նաեւ՝ շատ բաներ, որոնց կարգին՝ հեղինակությունը:

Հաջորդ նիստը նշանակված է հուլիսի 18-ին:

Երեկվա նիստից առաջ դատարանի առջեւ հավաքվել էին տարբեր հյուրանոցներում աշխատող կանայք՝ ի պաշտպանություն իրենց «տուժած» գործընկերների: Նրանք «ամոթ, ամոթ» վանկարկումով դիմավորեցին Ստրոս Կանին ու տիկնոջը:

# «Եվրոտեսիլը»՝ հօգուտ Ադրբեջանի

Հազիվ թե տեղին է, որ հայաստանյան մամուլը չարախնդում ու չարախոսում է «Եվրոտեսիլում» ադրբեջանցի երգիչների հաղթանակի կապակցությամբ: Իբր երգի այս ստուգատեսը որերորդական կարգի է եւ դրանով հպարտանալն ու առավել եւս դրա պատվին էժանագին շոու կազմակերպելը անիմաստ են: Կարծես հայերս չէինք ոգեւորվել ստեփանակերտցի պատանու հաջողությամբ: Ադրբեջանցիների «կեղծ» հաղթանակի վերաբերյալ որոշ նյութերից պարզապես գավառամտության սուր հոտ էր փչում:

Հասկացանք, ազերիները մեր թշնամիներն են, բայց դա չի նշանակում, թե նրանց ամեն մի ձեռնարկում ապաշնորհության դրսեւորում է: Մինչ մենք նիրհում ենք մեր ազգի տաղանդավարության, ճանաչված անհատականությունների առատության եւ մոլորակում մեր հայտնիության թառամող դափնիների վրա, ադրբեջանցիները, գիտակցելով աշխարհում նվազ ճանաչված լինելու պարագան, իրական քայլեր են անում, տվյալ դեպքում նաեւ «Եվրոտեսիլի» շրջանակում, «եվրոպական հավակնություններ ու հնարավորություններ» դրսեւորելու ուղղությամբ: Եվ այդ մասին նրանք անթաքույց գրում են նաեւ ռուսաստանյան մամուլում: Ադրբեջանը տնտեսական կարողությամբ եւ զարգացման տեմպերով տարածաշրջանի լիդերն է եւ ԱՊՀ-ի ամենահեռանկարային պետություններից մեկը, հայտարարում են նրանք: Լավ, հայերիս համար կարող է սուբյեկտիվ հնչել, երբ Դավութօղլուն Երեւանը գյուղ է համարում «սրընթաց եվրոպականացող» Բաքվի համեմատ (եթե նույնիսկ Թուրքիայի արտգործնախարարը Երեւանում չի էլ եղել): Բայց երկու մայրաքաղաքների միջեւ մեծ տարբերության փաստը ի վնաս մեզ հավաստում են նաեւ մոսկվացի այն հայերը, որոնք ռուսաստանյան տարբեր պաշտոնական պատվիրակությունների կազմում եղել են Բաքվում:

Դառնանք, սակայն, «տխրահռչակ» «Եվրոտեսիլին»: Ինչպես ասվեց, ադրբեջանցիներն ընդունում են, որ Եվրոմիության պաշտոնական մարմինները վաղեմի իներցիայով՝ կրոնաքաղաքակրթական տարբերությունների բերումով եւ այլն, սառը վերաբերմունք են դրսեւորում Ադրբեջանի նկատմամբ: Սակայն ամեն ինչ փոխվում է, եւ Ադրբեջանը իր բազմապլան առաջխաղացումներով ու եվրոպական կառույցների հետ արդյունավետ համագործակցությամբ հաստատում է իր նոր կերպարը Եվրոպայում, արձանագրում են նրանք: Եվ այդ ճանապարհին «Եվրոտեսիլը» եւս ճանաչման ու ինքնահաստատման միջոց է: Բնավ էլ զուգադիպություն չէ, որ 2012-ին Բաքվում կայանալիք հերթական մրցույթի կազմկոմիտեի մեջ ներգրավվել են կառավարության անդամներ, ճյուղային գերատեսչությունների ղեկավարներ ամենայն առաջին տիկնոջ՝ Մեհրիբան Ալիեւայի առաջնորդությամբ: Խնդիրը մեկն է՝ օգտվել այս տարվա «թավշյա հաղթանակից» եւ եկող տարի Եվրոպային (աշխարհին) ներկայացնել բարգավաճ, արդիական, քաղաքակիրթ նոր Ադրբեջանի համայնապատկերը: Միայն այս տարի Բաքվում շարք կմտնեն հինգաստղանի հյուրանոցներ: Տասնյակհազարավոր զբոսաշրջիկները, բազմաթիվ հեռուստաալիքները «կբացահայտեն առեղծվածային «Կրակների երկիրը»՝ մի պետություն, մի ժողովուրդ, որը ձգտելով եվրոպական ստանդարտների, իբր պահպանում է իր անկրկնելի ինքնատիպությունը: Պերճախո՞ս են ազերիները: Հազիվ թե, թերեւս ավելի շատ պրագմատիկ են. ինչու երգարվեստը եւս չօգտագործել ինքնաձեւավորման, միջազգային ճանաչման համար:

Այնպես որ սարկազմը՝ սարկազմ, բայց «Եվրոտեսիլը» կաշխատի հօգուտ Ադրբեջանի:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

**Մրցույթի ծածկագիրը՝ ՀՀ/ՆՏԻ-1/11**

Պատվիրատուն՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Երեւան քաղաքի «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի առաջին մասնաշենքի III-րդ եւ IV-րդ հարկերի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր /II-րդ փուլ, շարունակական ծրագիր/:

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Երեւան քաղաքի «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի առաջին մասնաշենքի III-րդ եւ IV-րդ հարկերի վերանորոգման աշխատանքները /II-րդ փուլ, շարունակական ծրագիր/:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 5.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին եւ դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. հունիսի 13-ից մինչեւ ս. թ. հուլիսի 04-ը, ժամը 10.00-ից մինչեւ 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գեւորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչեւ ս. թ. հուլիսի 06-ը, ժ. 11.00-ը:

**«Հայաստան» համահայկական հիմնադրամ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

**Մրցույթի ծածկագիրը՝ ՀՀ/Դ-1/11**

Պատվիրատուն՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Տավուշի մարզի Դիտավան գյուղի դպրոցի տարածքում տարրական դասարանների մասնաշենքի կառուցման աշխատանքների իրականացման պայմանագիր:

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Տավուշի մարզի Դիտավան գյուղի դպրոցի տարածքում տարրական դասարանների մասնաշենքի կառուցման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 5.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին եւ դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. հունիսի 13-ից մինչեւ ս. թ. հուլիսի 04-ը, ժամը 10.00-ից մինչեւ 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գեւորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչեւ ս. թ. հուլիսի 06-ը, ժ. 11.00-ը:

**«Հայաստան» համահայկական հիմնադրամ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի դատախազների ստորաբաժանման և արարողակարգի վարչության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**

**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

վարչության փաստաթղթային ստորաբաժանման, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքների, իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքների, համակարգչային մուտքագրման և ելքագրման աշխատանքների իրականացումը, անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն նախապատրաստելը, ինչպես նաև օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը և այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր ստորաբաժանման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «21» հունիսի 2011թ. :***

***Մրցույթն անցկացվելու է 2011թ. հուլիսի 7-ին ժամը «11.00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երևան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երևան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :***

**07.06.2011թ.**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, հայտարարում է պարզեցված ընթացակարգ՝ ՀՀ ԱՎԾ-ՊԸԱՊՁԲ-2011/3 ծածկագրով: Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԱՎԾ կարիքների համար լապտերի ձեռքբերումը: Հրավերը թղթային տեսքով անվճար ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչեւ սույն հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 8-րդ օրացուցային օրը, ժամը 12:00-ն, հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կառավարական տուն 3, 613 սենյակ, հեռ.՝ 522251, Վ. Ղազարյանին: Հրավերը անձին տրամադրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության գնումների տեղեկագրում հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:00-ն:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, հայտարարում է պարզեցված ընթացակարգ՝ ՀՀ ԱՎԾ-ՊԸԱՊՁԲ-2011/2 ծածկագրով: Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԱՎԾ կարիքների համար գրասենյակային գույքի (գրասեղան, գրապահարան, աթոռ) ձեռքբերումը: Հրավերը թղթային տեսքով անվճար ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչեւ սույն հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 8-րդ օրացուցային օրը, ժամը 12:00-ն, հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կառավարական տուն 3, 613 սենյակ, հեռ.՝ 522251, Վ. Ղազարյանին: Հրավերը անձին տրամադրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության գնումների տեղեկագրում հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն:

## «Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**

▼ **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*


## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացուհի Էլմիրա Գեւորգյանը երեկ տաքսու մեջ մոռացել է իր փոքրիկ պայուսակը՝ դեղերով եւ մի քանի այլ անձնական իրերով: Նա տաքսիով ուղեւորվել է Մաշտոցի պողոտայից ժամը 15.09-ին դեպի Մոնումենտ: Գտնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Խնդրում ենք զանգահարել՝ 077020160

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: